Գ Լ Ո Բ Ո Ւ Ս

Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն   Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

# ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

# «ԾՊՏՅԱԼ» ՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

**5**

**Մարտ, 2007**

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 5 (13)
Մարտ, 2007թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գլոբալ և տարածաշրջանային գործընթացներում ........................................ 3

О необходимости принятия доктрины
энергетической политики Армении ........................................................................ 9

Իրանական զարգացումներ. ռազմական հարվածի
հավանականությունը ........................................................................................ 11

Гонка противоракетных вооружений ...................................................................... 15

Աշխարհի միջուկային ծրագրերը.
ընդհանուր դիտարկում ......................................................................................... 18

Анклавная сбалансированность как важный
элемент стабильности Южного Кавказа ................................................................. 25

Վրացական մամուլը և հայ-աբխազական հակամարտությունը ........................................ 31

«Ծպտյալ» հայերի կրոնադարձությունը ..................................................................... 34

Հարցազրույց Բաղդադի Ազգային կենտրոնական վարչության
փոխատենապետ Վեհունի Մինասյանի հետ ................................................................. 38

Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների
ոլորտի աճի մոդել ................................................................................................ 40

Հայոց առևտրատնտեսական ներկայությունն աշխարհում ............................................ 44

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԼՈԲԱԼ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

## (ԱՄՆ - ԹՈՒՐՔԻԱ - ՀՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)

Հարավային Կովկասը (ՀԿ), չլինելով մեծ տարածաշրջան, կարևոր տեղ է գրավում գլոբալ քաղաքականությունում: Միացյալ Նահանգները (Մեծ Բրիտանիայի հետ համատեղ), Ռուսաստանը, Եվրամիության երկրները, Իրանը և Թուրքիան համարում են, որ ՀԿ-ն, և մասնավորապես Հայաստանը, գտնվում են իրենց ազգային շահերի ոլորտում: Կան բոլոր նախադրյալներն այն բանի, որ մոտ ապագայում նման հավակնություններ կներկայացնի նաև Չինաստանը: Ի լրումն՝ տարածաշրջանն օրգանապես կապված է Կենտրոնական Ասիայի, Մերձավոր և Միջին Արևելքի (ՄՄԱ) հետ, որոնք հանդիսանում են արդի ռազմաքաղաքական զարգացումների ամենաթեժ կետերը, և այնտեղ ընթացող գործընթացներն անմիջական արձագանք են գտնում ՀԿ-ում և Հայաստանում: Այս ամենը վկայում է այն մասին, որ արտաքին դերակատարների տարածաշրջանային շահերի հաշվառումը և դրանց համադրումը Հայաստանի քաղաքական հնարավորությունների հետ կարևոր խնդիր են ՀՀ վերլուծաբանական հանրության համար[1]: Նման հետազոտությունները թույլ կտան հանրապետության քաղաքականությունն իրականացնող ընտրանուն ավելի արդյունավետ կազմակերպել իրենց գործունեությունը և հնարավորինս համարժեք ընկալել Հայաստանի քաղաքական կոորդինատներն արդի աշխարհում:

***Նոր Սառը պատերազմի տրամաբանությունից բխող իրողություններ.*** Վերոնշյալ խնդրին լրացուցիչ հրատապություն և, միևնույն ժամանակ, բարդություն են հաղորդում «միաբևեռ» աշխարհակարգի վերափոխումը «բազմաբևեռի» ու աշխարհաքաղաքական դերակատարների հարաբերություններում ձևավորվող «սառըպատերազմյան» տրամաբանությունը: ԱՄՆ հավաքական ռեսուրսների հարաբերական նվազմանը և նրա մրցակիցների հզորացմանը զուգահեռ՝ այդ «սառը» հակամարտությունը սաստկանալու միտումներ է ցուցաբերում: Որպես հետևանք՝ քաղաքական զարգացումները խիստ դինամիկ և բազմաշերտ են դարձել: Պետք է նաև հաշվի առնել, որ լիարժեք բազմաբևեռ համակարգի ձևավորումը կարող է հանգեցնել նաև ԱՄՆ-ի, այսինքն՝ միաբևեռ համակարգի դեմ ուղղված պայքարում համագործակցող դերակատարների շահերի բախմանը: Այս իրողությունները վաղ թե ուշ թելադրելու են «տարածաշրջանային մակարդակի» երկրների քաղաքական ընտրանիներին՝ վերիմաստավորել և վերանայել «տարածաշրջանային անվտանգության» վերաբերյալ ներկայիս պատկերացումները՝ ձգտելով դրանք ավելի համարժեք դարձնել գլոբալ քաղաքական հարթությունում ձևավորվող նոր տրամաբանությանը: ՀԿ-ում այս նկատառումներն առաջին հերթին վերաբերում են Հայաստանին, քանի որ տարածաշրջանային երկրներից ՀՀ-ն միակն է, որ վարում է իր շահերը հետապնդող հնարավորինս ինքնուրույն քաղաքականություն: Համաձայն մի շարք չափանիշների՝ hարևան Վրաստանը փաստորեն ձեռք է բերել «դրսից կառավարվող» տարածքի կարգավիճակ, իսկ Ադրբեջանում հաստատվել է յուրովի երկիշխանություն՝ կազմված «մեծ եղբոր» կարգավիճակ ունեցող Թուրքիայից և ամերիկյան-բրիտանական նավթային ընկերություններից: Այսպիսով, ՀՀ քաղաքական հեռանկարի մշակման ծանրու-

[1] Ազգային վերլուծաբանական դպրոցի ձևավորումն անհրաժեշտ է դասել Ազգային անվտանգության (ԱԱ) առաջնահերթ խնդիրների թվին, քանի որ վերլուծաբանական հանրությունը հանդիսանում է այն «գործիքը», որի միջոցով քաղաքական ընտրանին, համարժեք մնալով արտաքին ռազմաքաղաքական և տնտեսական իրողություններին, կարող է համակարգել ազգային շահերը և արտաքին մարտահրավերները՝ այդպիսով հայեցակարգային բնույթ հաղորդելով ԱԱ համակարգին: Մինչդեռ իրավիճակը վերլուծաբանական ոլորտում յուրովի է զարգանում. ՀՀ-ում ներկայումս գործող մեզ հայտնի վերլուծաբանական կենտրոնների և խմբերի զգալի մասը ֆինանսավորվում է օտարերկրյա աղբյուրներից *(տե՛ս Հավելվածը)*, որոնք, պետք է կարծել, ուղղորդում և պլանավորում են նրանց գործունեությունը: Ներկայումս իրադրությունը փոքր-ինչ բարելավվել է ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը և ՊՆ նախարարությանն առընթեր վերլուծական կենտրոնների ստեղծմամբ: Սակայն այդ կենտրոնների և ուժային, տնտեսական, դիվանագիտական կառույցների վերլուծական ստորաբաժանումների աշխատանքները դեռևս որոշակի կոորդինացման կարիք ունեն:

թյունը, ի տարբերություն հարևան հանրապետությունների, հիմնականում ընկած է հենց Հայաստանի քաղաքական ընտրանու ուսերին: Այս համատեքստում պետք է հաշվի առնել, որ ***եթե ԱՄՆ ազդեցության նվազման***[1] *և նրա եվրասիական մրցակիցների՝ Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի հզորացման միտումները պահպանվեն, ապա Հայաստանի իշխանությունները, բացառված չէ, որ արդեն տեսանելի ապագայում, ստիպված լինեն վերանայել փոխլրացման ռազմավարության որոշ դրույթներ: Այդ ռազմավարությունը, անշուշտ, համարժեք է այսօրվա իրողություններին և արդյունավետ է գործում, սակայն կարող է լիովին չբավարարել հնարավոր զարգացումների տրամաբանությանը:*

***Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականությունը և Հայաստանը.*** Ելնելով ներկայացված մոտեցումներից՝ ՀՀ անվտանգության տեսանկյունից[2] առավել մեծ կարևորություն են ստանում ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի տարածաշրջանային շահերի, ինչպես նաև նրանց միջև հարաբերությունների օրինաչափություններն ըմբռնելը և հնարավորինս հաշվառելը: Անշուշտ, իմաստ ունի նման քննարկումները սկսել Միացյալ Նահանգների տարածաշրջանային շահերի դիտարկումից, քանի որ դրանք ՀԿ-ում և մասնավորապես ՀՀ-ում համալիր բնույթ են կրում և ընդգրկում են *աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական ու գաղափարախոսական* (կամ քաղաքակրթական) հարթությունները: Այդ ոլորտներում ԱՄՆ-ի կողմից վարվող գործընթացները փոխկապակցված են և փոխլրացնող:

Աշխարհաքաղաքականության տեսակետից ԱՄՆ-ի համար առանցքային նշանակություն են ձեռք բերել Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունները, որոնց հենքում դրված հայտնի սկզբունքային տարաձայնությունները պայմանավորում են ԱՄՆ ռազմավարությունը Եվրասիայում (Ռուսաստանի պարագայում) և ՄՄԱ-ում (Իրանի հետ կապված հարցերը): Այդ համատեքստում պետք է կարևորել այն հանգամանքը, որ Հայաստանը Ռուսաստանի միակ ռազմավարական գործընկերն է տարածաշրջանում և, միևնույն ժամանակ, սահմանամերձ Իրանի հետ իրագործում է որոշակի տնտեսական էներգետիկ ծրագրեր: Կարելի է ասել, որ ամերիկյան ներկայության և ազդեցության չափը ՀՀ-ում որոշակիորեն պայմանավորում է ԱՄՆ քաղաքական դիրքերը Ռուսաստանի և Իրանի դեմ իրականացվող գործընթացներում: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի և Իրանի հետ բխում են մեր ազգային շահերից և այս համատեքստում ԱՄՆ-ՀՀ հարաբերությունների միջև լարվածության աղբյուր կարող են հանդիսանալ:

Այլ բնույթ է կրում ամերիկյան ռազմավարությունը Վրաստանում. վերջինիս նշանակությունը ԱՄՆ-ի համար պայմանավորված է գերազանցապես նրանով, որ Վրաստանը լիովին կատարում է ամերիկյան կողմից իր վրա դրված հակառուսական գործառույթները[3]: Նկատենք, որ ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանի կարևորումը շատ ավելի բազմաշերտ բնույթ է կրում: Այստեղ առաջին հերթին հաշվի են առնվում աշխարհատնտեսական էներգետիկ (Կասպյան ավազանի էներգակիրների արևմուտք տեղափոխման) հայտնի խնդիրները: Միևնույն ժամանակ, գնահատվում է նաև Ադրբեջանի աշխարհաքաղաքական դիրքը (այդ երկիրը սահմանամերձ է Իրանին և Կենտրոնական Ասիային): Այսինքն, ըստ ամենայնի, ի տարբերություն Վրաստանի, Ադրբեջանը ԱՄՆ-ի համար ինքնուրույն ռազմավարական նշանակություն ունի: Այդ չափանիշներով ՀՀ-ն նույնպես զիջում է Ադրբեջանին, ինչը և հաճախ պայմանավորում է ամերիկյան դիրքորոշումները ղարաբաղյան կարգավորման գործընթացում: Սակայն տարօրինակ ձևով Հայաստանի գործոնը կարևորվում է ԱՄՆ-Թուրքիա հարաբերություննե-

---

[1] Անգլոսաքսերի հետ կապված ցանկացած զարգացումները դիտարկելիս պետք է մշտապես հաշվի առնել այն հանգամանքը, որ առայսօր նրանք գուցե և պարտվել են առանձին ճակատամարտերում, սակայն դեռևս տանուլ չեն տվել որևէ պատերազմ: Դա նշանակում է, որ ներկայացված միտումները, չնայած այն բանին, որ օբյեկտիվ բնույթ են կրում (դրա վկայություններից է ՀՀ-ում ռուսական ներկայության և ազդեցության աճը) և ընդունվում են քաղաքագիտական հանրության մի զգալի մասի կողմից, միշտ ենթակա են անսպասելի փոփոխությունների, այսինքն՝ պետք է հաշվի առնել անգլոսաքսոնյան քաղաքական մտքի ներուժը և ճկունությունը:

[2] Հայտնի է, որ այդ տերությունների կողմից ՀՀ-ի նկատմամբ վարվող ռազմավարությունն առնչվում է ոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքական խնդիրներին:

[3] Վրաստանի ղեկավարությունը որպես գերագույն ազգային խնդիր ներկայացնում է իր խորհրդային ժամանակների տարածքային ամբողջականության վերականգնումը: Մինչդեռ այդ խնդրի լուծումը հնարավոր է միայն Ռուսաստանի հետ դրացիական հարաբերությունների հաստատման պարագայում. նկատի ունենալով Վրաստանի՝ որպես տարածաշրջանային կենտրոնի, կարևորությունը, նման պայմաններում գուցե և «հանձներ» Աբխազիան և Հարավային Օսիան:

րում: Սա կարծես թե այն դեպքն է, երբ ՀՀ-ն ԱՄՆ-ի կողմից դիտարկվում է ռուսական և իրանական ենթատեքստից փոքր-ինչ դուրս և ունի առավել ինքնուրույն նշանակություն: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Առաջին Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան կորցրեց ԽՍՀՄ հարավում արևմտյան հենակետի իր կարգավիճակը, և դա բավական իրատեսորեն ընկալվեց ԱՄՆ-ի և Թուրքիայի կողմից: Վերջինիս համար նոր հնարավորություններ բացվեցին պանթյուրքական նախագծերի իրագործման տեսանկյունից, ինչը թվում էր, թե նոր խթան կհանդիսանա նախկին կայսրության համար և միաժամանակ թույլ կտա ձերբազատվել «ամերիկյան հավելվածի» կարգավիճակից: Սակայն նման հեռանկարը հակասում էր ոչ միայն Ռուսաստանի շահերին: Նորանկախ միջինասիական հանրապետություններում Թուրքիայի ակտիվացումը բացասաբար ընկալվեց նաև Չինաստանի (մասնավորապես հաշվի առնելով ույղուրական գործոնը) և նույն ԱՄՆ-ի կողմից. միջինասիական տարածաշրջանում թուրքական ներկայությունը վերջինիս կողմից ընկալվեց որպես լրացուցիչ մրցակցություն: Սակայն ավելի շատ պետք է կարևորել այն հանգամանքը, որ ամերիկյան գլոբալ ռազմավարությունը չի ընդունում պանթյուրքական նկրտումները և Թուրքիայի ապագան տեսնում է որպես իսլամական երկրների համար մի «աշխարհիկ» (սեկուլյար) պետության մոդել, որին պետք է հետևեն նաև այլ մահմեդական պետությունները: Այս համատեքստում պետք է գնահատել այն տեղեկատվությունը, ըստ որի՝ Անկարայում «չափավոր իսլամիստների» իշխանության գալը կապված է «նեոկոնսերվատիզմի» ստրատեգներից մեկի՝ Փոլ Վուլֆովիցի անվան հետ, որը և մշակել է իսլամի «աշխարհիկացման» հայեցակարգը: Նման մոտեցման մեկ այլ արտահայտությունն են Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու ամերիկյան անթաքույց ջանքերը, ինչը բացասաբար է ընկալվում եվրակենտրոն երկրների կողմից:

Ամերիկյան նման ռազմավարությունը, որը շեղում է թուրքական ընտրանուն իր ազգային-պանթյուրքական նպատակների իրագործման ծրագրից, խորքային հակասություններ է առաջացրել ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում: Դա զգացվում է ոչ միայն Հյուսիսային Իրաքի հետ կապված հայտնի զարգացումներում, այլև Թուրքիա-Իսրայել և Թուրքիա-Իրան հարթություններում. եթե առաջինի պարագայում նկատելի է հարաբերությունների որոշակի սառեցում, ապա Թեհրանի հետ Անկարան կարծես գտնում է որոշակի եզրեր (այդ թվում նաև համատեղ միջուկային ծրագրերի իրագործման առումով): Այս ոգով ընթացող Անկարայի գործընթացներին որոշակի իմպուլս է հաղորդում նաև միաբևեռ համակարգի խարխլումը, որը Թուրքիային (ինչպես և այլ երկրներին) մղում է փնտրելու իր ուրույն տեղը նոր ձևավորվող աշխարհակարգում:

Մինչդեռ հայտնի է, որ Վաշինգտոնը, որպես փաստարկ, Անկարայի հետ բանակցություններում հաճախ օգտագործում է Հայոց ցեղասպանության ընդունման կամ չընդունման խնդիրը. այն վերածվել է մի գործոնի, որի միջոցով ԱՄՆ-ը փորձում է ուղղորդել թուրքական (մասամբ նաև հայկական) քաղաքական ընտրանուն[1]:

Համառոտ ներկայացված այս իրողությունները խոսում են այն մասին, որ Հայաստանի համար ամենալուրջ սպառնալիք հանդիսացող երկրի՝ Թուրքիայի հակասությունները ԱՄՆ-ի հետ տևական ու ռազմավարական բնույթ են ստանում և խորանալու միտում ունեն, և այս զարգացումներում հայկական գործոնը որոշակի դերակատարում ունի Թուրքիայի նկատմամբ ճնշումներ կիրառելու առումով: Այսինքն՝ ԱՄՆ նման քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ համապատասխանում է ՀՀ ազգային շահերին և կարող է նպաստել ԱՄՆ-ՀՀ արդյունավետ համագործակցության գործընթացին:

*Գագիկ Հարությունյան*
*«Նորավանք» հիմնադրամ*

[1] Նկատենք, որ նման մարտավարությունն ունի նաև որոշակի «ռուսական» համատեքստ, քանի որ հայ-թուրքական սահմանի բացումը և հարաբերությունների կարգավորումը կարող են ինչ-որ չափով արժեզրկել ռուսաստանյան ռազմակայանի առկայությունը ՀՀ-ում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այս խնդրում ՀՀ ճկուն դիրքորոշումը՝ ՀՀ-ում Ռուսաստանի ռազմական ներկայությունը պահպանելու հաստատակամությունը և թուրքական կողմի ժխտողական կեցվածքը, կարելի է կարծել, թե խնդիրը դեռևս բավական ժամանակ չի տեղափոխվի գործնական հարթություն:

*Հավելված*

## Հայաստանի վերլուծական կենտրոնները

Ստորև ներկայացված վերլուծական կենտրոնները բաժանված են երեք հիմնական մասի՝ ըստ իրենց ունեցած մտավոր և նյութատեխնիկական կարողությունների (ըստ ինստիտուցիոնալացման աստիճանի):

| № | անվանումը | ղեկավարը | ֆինանսավորումը | վերլուծական հատվածի աշխատակիցների ներկա քանակը | միջին աշխատավարձը | հասցե/հեռախոս |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Նորավանք» ԳԿՀ | Գագիկ Հարությունյան | ՀՀ պետական բյուջե | 7 | $350-400 | ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1, հեռ.՝ 440 473 office@noravank.am www.noravank.am |
| 2. | «Քաղաքական հետազոտությունների հայկական միջազգային խումբ» (AIPRG) | գործադիր վարչություն (Կոստանդին Աթանեսյան) | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | մոտ 30 | առնվազն $500 | ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 16, հեռ.՝ 528 723 postmaster@armpolicyresearch.org www.armpolicyresearch.org |
| 3. | «ՀՀ Նախագահին առընթեր Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» | Գառնիկ Իսագուլյան | ՀՀ պետական բյուջե | առավելագույնը՝ 5 | | |
| 4. | Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ | Հայկ Քոթանջյան | ՀՀ պետական բյուջե | առավելագույնը՝ 5 | | |
| 5. | Ռազմավարական հետազոտությունների կենտրոն[1] | Վարդան Օսկանյան | արևմտահայ գործարարներ + ամերիկաեվրոպական աղբյուրներ | առավելագույնը՝ 5 | | |
| 6. | «Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն» | Րաֆֆի Հովհաննիսյան | ամերիկյան աղբյուրներ + արևմտահայ գործարարներ | առավելագույնը՝ 7 | մոտ $300 | ք. Երևան, Երզնկյան 75, հեռ.՝ 528 780, 274 818 root@acnis.am www.acnis.am |
| 7. | «Հայ-եվրոպական քաղաքական և իրավական խորհրդատվության կենտրոն» (AEPLAC) | Տիգրան Ջրբաշյան | եվրոպական աղբյուրներ | առավելագույնը՝ 8 | մոտ $600 | ք. Երևան, Չարենցի 28, հեռ.՝ 553 081 info@aeplac.am www.aeplac.am |
| 8. | «Հայաստան 2020» (Armenia 2020) | Արտաշես Ղազախեցյան | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 5 | մոտ $700 | ք. Երևան, Բաղրամյան 6, բն. 5, հեռ.՝ 524 140 project@armenia2020.org www.armenia2020.org |
| 9. | «Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն» (EDRC) | Մուշեղ Թումասյան | գերազանցապես ամերիկաեվրոպական աղբյուրներ | մոտ 10 | | ք. Երևան, Տպագրիչների 15, բն. 13, հեռ.՝ 540 289, 542 631 info@edrc.am www.edrc.am |
| 10. | «ԱՊՀ երկրների ինստիտուտ» (Հայաստանի բաժանմունք) (Институт стран СНГ-Армения)[2] | Արամ Սաֆարյան, Հայկ Քոթանջյան[3] | ռուսական աղբյուրներ | | | |

[1] Կենտրոնը դեռ չի հիմնադրվել: Հիմնադրման մասին խոսակցություններն ընթանում էին 2006թ. ամռանը:
[2] Կենտրոնի հիմնադրման ընթացքը գտնվում է անորոշ վիճակում:
[3] Մոսկվայում գործող «Институт стран СНГ»-ի ղեկավարն է ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Զատուլինը:

| № | անվանումը | ղեկավարը | ֆինանսավո-րումը | վերլուծա-կան հատվա-ծի աշխատա-կիցների ներ-կա քանակը | միջին աշխա-տա-վարձը | հասցե/հեռախոս |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | «Ռազմավարական հե-տազոտությունների «Սպեկտրում» կենտրոն» | Գայանե Նովիկովա | գերազանցա-պես ամերիկյան աղբյուրներ | առավելա-գույնը՝ 5 | մոտ $500-700 | ք. Երևան, Աբովյան 42, բն. 8, հեռ.՝ 526 239 spectrum@spectrum.am www.spectrum.am |
| 12. | «Մարդկային զարգաց-ման միջազգային կենտրոն» (ICHD) | Թևան Պողոսյան | գերազանցա-պես ամերիկյան աղբյուրներ | առավելա-գույնը՝ 5 | մոտ $500-600 | ք. Երևան, Սայաթ Նովա 19 («Անի պլազա» հյուրանոց, Business floor), հեռ.՝ 582 638, 528 321, 527 082 mail@ichd.org www.ichd.org |
| 13. | «Ժողովրդավարության կովկասյան ինստի-տուտ. զարգացման հիմնադրամ» հարավ-կովկասյան բաժին («Ռեգնում») | Արմենիկա Կիվիրյան[1] | ռուսական աղբյուրներ | առավելա-գույնը՝ 10 | $500-700 | ք. Երևան, Մարտիրոս Սարյանի 26/4, հեռ.՝ 536 280 fondkavkaz@netsys.am |
| 14. | «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային առաջընթացի ինստիտուտ» (ICSRD) | Աղավնի Կարախանյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելա-գույնը՝ 5 | մոտ $500 | ք. Երևան, Մարտիրոս Սարյան 24Ա, բն. 46, հեռ.՝ 586 121, 265 975 info@icsrd.am www.icsrd.am |
| 15. | «Կովկասյան մեդիա ինստիտուտ» | Ալեքսանդր Իսկանդարյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելա-գույնը՝ 4 | մոտ $300-400 | ք. Երևան, Եզնիկ Կողբացի 39, հեռ.՝ 540 631, 540 632 contact@caucasusmedia.org www.caucasusmedia.org |
| 16. | «Նոր հարևաններ» | | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | | | www.norharevanner.am www.newneighbors.am |
| 17. | «Կովկասյան հետազո-տական ռեսուրսների կենտրոններ-Հայաս-տան» (CRRC-Armenia)[2] | Հեղինե Մանասյան[3] | գերազանցա-պես ամերիկյան աղբյուրներ | առավելա-գույնը՝ 5 | | ք. Երևան, Աբովյան 52, հեռ.՝ 581 330, 582 450 crrc@crrc.am www.crrc.am www.crrccenters.org |
| 18. | «Ռեգիոն» հետազո-տական կենտրոն | Լաուրա Բաղդասարյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելա-գույնը՝ 4 | | ք. Երևան, Արշակունյաց 2 (Մամուլի տուն), 2-րդ հարկ, հեռ.՝ 580 219 region@arminco.com armenia@caucasusjournalists.net www.regioncenter.org |
| 19. | «Տնտեսական հետազո-տությունների ինստի-տուտ» (Economic Research Institute) | Արմենակ Դարբինյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելա-գույնը՝ 4 | | ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 31, հեռ.՝ 244 410, 245 112 eri@netsys.am www.armeri.am |
| 20. | «Քաղաքագիտության և միջազգային հարաբերու-թյունների քաղաքական հետազոտությունների դպրոցի Թուրփանջյան կենտրոն» (Turpanjian Center for Policy Analysis School of Political Science and International Affairs) | համակարգող՝ Նարինե Հակոբյան | ամերիկյան աղբյուրներ + արևմտահայ գործարարներ | առավելա-գույնը՝ 5 | | ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի 40, հեռ.՝ 512 580 tcpa@aua.am www.aua.am/aua/research/cpa |

[1] «Ժողովրդավարության կովկասյան ինստիտուտ. զարգացման հիմնադրամ» հարավկովկասյան բաժնին հովանավորում է ռուսական «Ժողովրդավարության կովկասյան ինստիտուտ. զարգացման հիմնադրամը» («Кавказский институт демократии. фонд развития»)» ինստիտուտի հարավկովկասյան բաժանմունքի գլխավոր տնօրենը՝ Արմենիկա Կիվիրյանը, միաժամանակ ռուսական «Ռեգնում» լրատվական գործակալության հարավկովկասյան բաժանմունքի ղեկավարն է:
[2] Հովանավորում են ամերիկյան «Carnegie Corporation of New York»-ը (չշփոթե՛լ հանրահայտ «Carnegie Endowment for International Peace» հաստատության հետ) և «Eurasia Foundation»-ը:
[3] CRRC-ի տարածաշրջանային (հարավկովկասյան) տնօրենն է Լարա Ցոլակյանը:

| № | անվանումը | ղեկավարը | ֆինանսավորումը | վերլուծական հատվածի աշխատակիցների ներկա քանակը | միջին աշխատավարձը | հասցե/հեռախոս |
|---|---|---|---|---|---|---|
| 21. | «Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ» (ՄԻԺԻ) | Գոռ Հակոբյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելագույնը՝ 5 | մոտ $300-350 | ք. Երևան, Այգեձոր 4/1, հեռ.՝ 264 712 idhr@web.am idhrcentre@web.am www.idhr.am |
| 22. | «Հայաստանի քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոն» | Աղասի Ենոքյան | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 3 | մոտ $200 | ք. Երևան, Արշակունյաց 2 (Մամուլի տուն), 2-րդ հարկ, հեռ.՝ 541 022 |
| 23. | «Իրանագիտության կովկասյան կենտրոն» | Գառնիկ Ասատրյան | իրանական աղբյուրներ | առավելագույնը՝ 5 | մոտ $100-150 | ք. Երևան, Խորենացի 26, հեռ.՝ 567 207, 274 470 (տուն) |
| 24. | «Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության մասին վերլուծական կենտրոն» | Ստեփան Գրիգորյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելագույնը՝ 3 | | հեռ.՝ 357 026 (տուն) |
| 25. | «Հայ-արիական միաբանություն» | Արմեն Այվազյան | հայկական | առավելագույնը՝ 3 | | ք. Երևան, Փավստոս Բուզանդի 39, հեռ.՝ 566 533 |
| 26. | «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոն | Ահարոն Ադիբեկյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | առավելագույնը՝ 3 | մոտ $100-200 | ք. Երևան, Պուշկինի 12, 2-րդ հարկ, հեռ.՝ 542 415 |
| 27. | «Քաղաքացիական ազգային նախաձեռնություն» (NCI)[1] | համակարգող՝ Լիլիթ Սարուխանյան | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 3 | | ք. Երևան, Երզնկյան 75, հեռ.՝ 271 600, 270 003 info@nci.am www.nci.am |
| 28. | «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» (Civil Society Institute)[2] | Արտակ Կիրակոսյան | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 5 | | ք. Երևան, Վաղարշյան 24, բն. 85, հեռ.՝ 272 014 csi@csi.am www.csi.am |
| 29. | «Մարդու իրավունքները Հայաստանում» ինտերնետ-աղբյուր[3] | ղեկավարող խորհուրդ (համակարգող՝ Թամարա Հովնանյան) | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 5 | | ք. Երևան, Վաղարշյան 24, բն. 85, հեռ.՝ 272 014 newsletter@hra.am tamara@csi.am www.hra.am |
| 30. | «Խաղաղաշինության և կոնֆլիկտի հաղթահարման ռեսուրս կենտրոն»[4] | ղեկավարող խորհուրդ (համակարգող՝ Մայա Բարխուդարյան) | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 3 | | ք. Երևան, Վաղարշյան 24, բն. 85, հեռ.՝ 272 014 maya@csi.am www.peacebuilding.am |
| 31. | «Նախընտրական տեխնոլոգիաների կենտրոն» | Ալեքսանդր Ավետիսյան | գերազանցապես ամերիկյան աղբյուրներ | առավելագույնը՝ 3 | | ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3, 6-րդ հարկ, հեռ.՝ 563 233 |
| 32. | «Արաց» գործակալություն | Հովսեփ Խուրշուդյան | ամերիկա-եվրոպական աղբյուրներ | | | ք. Երևան, Պ. Տիչինայի 100, հեռ.՝ 275 905 arats@education.am aratsagency@yahoo.com www.education.am |

*Սարգիս Հարությունյան*
*«Նորավանք» հիմնադրամ*

[1] Փաստացի հանդիսանում է «Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի» ստորաբաժանումը:
[2] Չշփոթե՛լ «Open Society Institute»-ի (Սորոսի հիմնադրամ) հետ:
[3] «Մարդու իրավունքները Հայաստանում» ինտերնետ-աղբյուրը գտնվում է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» հասցեում: Վերջինս, ըստ ամենայնի, «Մարդու իրավունքները Հայաստանում» ինտերնետ-աղբյուրի հիմնական հովանավորն է:
[4] «Խաղաղաշինության և կոնֆլիկտի հաղթահարման ռեսուրս կենտրոնը» գտնվում է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» հասցեում: Վերջինս, ըստ ամենայնի, «Խաղաղաշինության և կոնֆլիկտի հաղթահարման ռեսուրս կենտրոնի» հիմնական հովանավորն է:

# О НЕОБХОДИМОСТИ ПРИНЯТИЯ ДОКТРИНЫ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ

Ввод в эксплуатацию в период с 2005-го по 2007 гг. энергетических трубопроводов, таких как нефтепровод Баку-Тбилиси-Джейхан, газопроводы Баку-Тбилиси-Эрзерум, Иран-Армения, присоединение Казахстана к транскавказскому нефтепроводу знаменует появление качественно новой политико-энергетической ситуации в регионе Южного Кавказа и Каспия. Реализованные в данном регионе энергетические проекты – фактически – до последнего времени являлись составной частью крупных региональных политических проектов, которые, в основном, преследовали следующие цели:

- Отстранить Россию и Иран от процесса добычи и транспортировки региональных нефти и газа (Баку-Джейхан, Баку-Эрзерум),
- Создать альтернативу региональным проектам западного происхождения (Иран-Армения) и восстановить особую энергетическую роль России в регионе (покупка Россией энергетических мощностей в Армении и Грузии, попытки покупки РАО ЕЭС электрических сетей Азербайджана).

Однако в те самые дни, когда первые тонны нефти и первые тысячи кубометров газа потекли по новым региональным трубопроводам, все нефте- и газопроводы приобрели то действительно энергетическое значение, которого они не имели в моменты подписания экономически нерациональных политических соглашений об их строительстве. Здесь речь идет как о проектах Баку-Джейхан, Баку-Эрзерум, так и о газопроводе Иран-Армения.

Теперь уже можно с определенной уверенностью говорить о начале новой независимой жизни реализованных в течение последних лет энергетических проектов, которые в будущем систематически и последовательно будут корректировать политические процессы в регионе, влияя не только на политику стран Южного Кавказа, но и на политику крупных мировых и региональных держав и объединений (США, Россия, Иран, Турция, ЕС, Казахстан, Китай, ШОС), которые с разным успехом в течение последнего десятилетия и определяли характер реализованных энергетических проектов в регионе.

В связи с этим можно предположить, что энергетическая политика в регионе Южного Кавказа ***вступает в фазу своей институционализации***, которая поспособствует ее (политики) трансформации из конъюнктурной в долгосрочную. В течение этой фазы, как показывает мировой опыт, появляются стратегии (доктрины) энергетической безопасности, которые определяют не только национальную энергетическую политику того или иного государства, но и политику заинтересованных сторон в реализации того или иного энергетического проекта на территории данного национального государства.

Фаза институционализации энергетической политики указывает на весьма важное обстоятельство: страны Южного Кавказа достигли момента, когда экономическое развитие и необходимость дальнейшего системного отстаивания национальных интересов делают более чем актуальной проблему разработки доктрины ***энергетической безопасности*** или доктрины ***энергетической политики***. Отношение между этими двумя понятиями, в данном случае, можно определить через соотношение категорий энергетического «выживания» и энергетического развития. В случае со второй категорией можно говорить не просто о наличии программ обеспечивающих стабильность энергетической ситуации в стране, но и о наличии программ превращения государства в важное и амбициозное звено региональной и международной энергетической безопасности. В случае с Арменией целесообразно говорить о необходимости разработки именно доктрины энергетической политики государства, так как:

- Энергетика для Армении – страны с ограниченным количеством сырьевых ресурсов, находящейся на периферии основных региональных энергетических потоков – имеет, кроме своего традиционно важного значения, также и другое значение: именно в условиях конкурентоспособного развития энергетического сектора и инфраструктуры можно достичь частичной интеграции страны в реальный сектор мировой экономики, минуя закрытые по политическим причинам границы,
- Энергетика может быть единственным сектором, которому удастся экономически рационализировать политическое и стратегическое сотрудничество Армении со своими соседями, прежде всего с Россией и Ираном, находящимися по ту сторону выстроенного в течение последних лет энергетического коридора Каспий-Средиземное море (Баку-Джейхан, Баку-Эрзерум). Фактор важный, так как он может придать сотрудничеству с Арменией не просто географически детерминированное основание,
- Энергетика, может быть, единственный реальный сектор национальной экономики Армении, который может выступить рынком сбыта и апробации для пока еще с экономической точки зрения скромных достижений отечественной сферы высоких технологий, развитие которой считается приоритетным в стране.

Нам представляется, что доктрина энергетической политики Армении должна быть разработана рабочей группой, состоящей из представителей исполнительной власти (Министерство энергетики, МИД, Министерство экономического развития и торговли), крупных энергетических компаний, действующих в Армении и способных стать локомотивом развития национальной энергетики и ее регионализации (прежде всего, конечно, АрмРосгазпром), экспертов и аналитиков, занимающихся проблемами политического и экономического развития регионов – потенциальных поставщиков энергетического сырья в Армению или же потенциальных рынков сбыта продукции электровырабатывающих мощностей республики. Представители законодательной власти, природоохранных и экологических общественных организаций должны включиться в работу над доктриной только на последней стадии, что уменьшит политизацию работы и помешает ее использованию в популистских целях.

Этапы работы над доктриной:

1. ***Составление технико-фактологического альманаха «Энергетика Армении».*** Цель – получение полной и достоверной информации о состоянии энергетической потребности Армении, тенденциях ее роста, о состоянии энергетической инфраструктуры, структуры энергетического сектора.
2. ***Составление технико-фактологического и политического альманаха «Энергетика региона».*** Цель – получение полной и достоверной информации о состоянии энергетической потребности в регионе, тенденциях ее роста, о состоянии энергетической инфраструктуры, структуры энергетического сектора, количестве и качестве ресурсов. Важным является выявление тех или иных политических процессов, могущих влиять на энергетические потоки и их безопасность в регионе и, следовательно, на политическую целесообразность участия или неучастия Армении в реализации энергетических проектов.
3. ***На основе проделанной работы в рамках реализации 1-го и 2-го пунктов должны быть разработаны реальные рекомендации,*** которые должны лечь в основу выработки основных направлений доктрины энергетической политики Армении, с учетом факторов целесообразности развития Арменией атомного, гидроэнергетического, теплоэнергетического и альтернативного секторов национальной энергетики. Отдельные рекомендации политического характера должны стать основой реализации тех или иных шагов на международной арене, которые могут повысить эффективность энергетической политики Армении.
4. ***Создание или написание доктрины.*** Данный этап, с учетом эффективности работы в рамках 1,2,3-го этапов может стать самым краткосрочным и техническим.

***Севак Саруханян***
***Фонд «Нораванк»***

# ԻՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ. ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՎԱԾԻ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 24-ին ՄԱԿ Անվտանգության խորհուրդն (ԱԽ) ընդունեց թիվ 1747 բանաձևը, որով խստացվում են Իրանի նկատմամբ դեռևս 2006թ. դեկտեմբերի 23-ի նմանատիպ փաստաթղթով հաստատված պատժամիջոցները:

Ըստ նոր բանաձևի՝ Իրանին արգելվում է զենքի, զինտեխնիկայի արտահանումը, ինչպես նաև սառեցվում են մի շարք կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց բանկային հաշիվները, որոնք որոշակի առնչություն ունեն իսլամական հանրապետության միջուկային ծրագրի հետ: Էլ ավելի կարևոր է, որ ՄԱԿ ԱԽ-ը սահմանել է 60-օրյա ժամկետ, որի ընթացքում Թեհրանը պետք է բավարարի բանաձևով առաջ քաշված պահանջները. առաջին հերթին դադարեցնի ուրանի հարստացման աշխատանքները: Հակառակ պարագայում, ՄԱԿ ԱԽ-ը անցնելու է նոր միջոցների կիրառման հարցի քննարկմանը:

Սկզբունքային նորությունն այն է, որ պատժամիջոցների խստացմանը կողմ է արտահայտվել նաև Ռուսաստանը: Կարևորն այստեղ ոչ այնքան կոնկրետ բանաձևի նկատմամբ Մոսկվայի մոտեցումն է, որքան ընդհանուր՝ իրանական հարցի վերաբերյալ ռուսական դիվանագիտության փոփոխությունը: Եթե նախկինում միջազգային մակարդակում կար ազդեցիկ երկրների մի խումբ (Ռուսաստան, Չինաստան, Ֆրանսիա, Գերմանիա), որոնք փաստացի համաձայն էին իրանական միջուկային ծրագրի խաղաղ բնույթի հետ, ապա վերջին ամիսներին խնդրի առնչությամբ եվրոպական դիրքորոշման կոշտացման ֆոնին ռուսական քաղաքականության մեջ նման տեղաշարժը, իրականում, փոխում է իրավիճակը կամ առնվազն կարող է վկայել իրավիճակի փոփոխության մասին: Պատահական չէ, որ թիվ 1747 բանաձևի օգտին կողմ են քվեարկել ՄԱԿ ԱԽ բոլոր 15 անդամները, այդ թվում՝ իրանական հարցի առնչությամբ մեղմ դիրքորոշումներով առանձնացող Կատարը, Ինդոնեզիան և Իտալիան[1]:

Առկա է նաև ժամանակի գործոնը: Իրանական հարցի առնչությամբ միջազգային քաղաքականության մեջ վերոհիշյալ փոփոխությանը զուգահեռ, արդեն իսկ հայտնի է նոր իրավիճակի նկատմամբ Իրանի քաղաքական ղեկավարության կոշտ դիրքորոշումը[2]: Քանի որ ընդհանուր լարվածությունն աճել է, և գոյություն ունի «վերջնաժամկետ» տարրը, ապա 60-օրյա փուլի ավարտից հետո իրավիճակը չի կարող նույնը մնալ: Հաշվի առնելով ներկայացվածը՝ իրավիճակի հետագա զարգացման մեջ ներկայումս աճում է հենց ռազմական հարվածի հավանականությունը: Այսինքն՝ ժամանակն աշխատում է այդ տարբերակի օգտին:

### *Փոփոխություն Ռուսաստանի քաղաքականության մեջ*

Թեև իրանական հարցի առնչությամբ Ռուսաստանը դեմ է ռազմուժի կիրառմանը և իսլամական հանրապետությունը դիտարկում է որպես Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում ամերիկյան ազդեցության ընդլայնման կարևոր խոչընդոտ, սակայն խնդրի առնչությամբ ռուսական քաղաքականության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ:

2007թ. հունվարի 17-ից իրանական կողմը դադարեց վճարել Բուշեհրի ԱԷԿ-ի շինարարությունն իրականացնող ռուսական *«Атомстройэкспорт»* ընկերությանը՝ պատճառաբանելով աշխատանքների դանդաղ ընթացքը: Չնայած մարտի 26-ին *«Атомстройэкспорт»-ը* հայտարա-

[1] Նշված երկրները ներկայումս մտնում են ՄԱԿ ԱԽ ոչ մշտական անդամների (10 երկիր) ցանկի մեջ, որոնց անդամությունը ժամանակավոր է:

[2] Մարտի 23-ին Պարսից ծոցում իրանցիների կողմից բրիտանացի 15 նավաստիների ձերբակալությունը և թիվ 1747 բանաձևի ընդունման հաջորդ օրը Մահմուդ Ահմադինեժադի հայտարարությունը, թե ՄԱԿ ԱԽ բանաձևը «ոչ մի վայրկյան չի դադարեցնի» իրանական միջուկային ծրագրի ընթացքը, իրանական դիրքորոշման ցուցիչներն են:

րեց, թե հունվարից ի վեր ստացել է դրամական առաջին փոխանցումը, սակայն հարցը վերջնականապես փակված չէ, քանի որ ռուսական կողմի ներկայացմամբ՝ չի կատարվել անհրաժեշտ վճարումների ողջ ծավալը:

Երկրորդ կարևոր հանգամանքը. 2006թ. սեպտեմբերի 26-ին կնքված ռուս-իրանական պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը 2007թ. մարտից պետք է սկսեր Բուշեհրի ԱԷԿ-ի գործարկման համար նախատեսված վառելիքի մատակարարումը: 2007թ. մարտին վառելիքի մատակարարումը տեղի չունեցավ: Ներկայումս անհայտ են հարցի կարգավորման ժամկետները[1]:

Երրորդ՝ նոր պայմաններում, հետևաբար, անորոշ են դարձել նաև Բուշեհրի ԱԷԿ-ի աշխատանքների, այսպես կոչված, ֆիզիկական ու էներգետիկ մեկնարկների ժամկետները (նախկինում որպես ժամկետներ նշվում էին, համապատասխանաբար, 2007թ. սեպտեմբեր ու նոյեմբեր ամիսները)[2]:

Չորրորդ՝ այդ ամենի ֆոնին 2007թ. փետրվարի 26-ին Իրանի խորհրդարանը հավանության արժանացրեց կառավարության առաջարկը՝ միջուկային էներգիայի ոլորտում հետազոտությունների խթանման ու նոր ատոմակայանների շինարարության համար: Այդ նպատակով իրանցի օրենսդիրներն առանձնացրին $1.3 մլրդ: Արդեն մարտի 6-ին Իրանի փոխնախագահ ու Ատոմային էներգիայի իրանական կազմակերպության ղեկավար Գոլամռեզա Աղազադեն հայտարարեց նոր ԱԷԿ-ի կառուցման մեկնարկի մասին[3]:

Հինգերորդ՝ մարտի 13-ին Ռուսաստանի Ատոմային էներգիայի դաշնային գործակալության[4] մամլո քարտուղար Սերգեյ Նովիկովը հայտարարեց, թե Բուշեհրի ԱԷԿ-ի շինարարության վրա աշխատող ռուս մասնագետներն աստիճանաբար լքում են Իրանը: Թեև մարտի 20-ին *«Атомстройэкспорт»* ընկերությունը հերքեց այդ տեղեկությունը, սակայն ուշադրություն են գրավում հետևյալ կետերը.

- հայտարարությունը չի հերքվել գործակալության կողմից,
- հայտարարությունը չէր կարող լինել թյուրիմացության արդյունք, քանզի կատարվել է Ռուսաստանում ատոմային էներգիայի ոլորտը վերահսկող պետական կազմակերպության մամլո քարտուղարի կողմից,
- *«Атомстройэкспорт»* ընկերությունը նման կարևոր հայտարարությունը հերքեց միայն յոթ օր անց:

Եվ վեցերորդ՝ ոչ պակաս կարևոր հանգամանք է այն, որ ծագած հարցերի առնչությամբ կողմերը սկսեցին վարել տրամագծորեն հակառակ տեղեկատվական կամպանիաներ: Ընդհանուր առմամբ, ռուս-իրանական միջուկային համագործակցության մեջ առաջացած տարաձայնությունների հրապարակումն աննախադեպ է, ինչը կարող է վկայել այլ նպատակների մասին:

Հայտնի է, որ Բուշեհրի ԱԷԿ-ի շինարարության ընթացքը և կայանին վառելիքի մատակարարումը Մոսկվան շատ հաճախ օգտագործել է որպես ճնշամիջոց Թեհրանի նկատմամբ: Սակայն ներկա իրավիճակը բնութագրվում է նրանով, որ տարաձայնություններին զուգահեռ՝ Մոսկվան իրանական հարցի առնչությամբ սկսեց հանդես գալ քաղաքական բնույթի նոր հայտարարություններով: Հետևաբար, ի հայտ եկած ռուս-իրանական հակասությունները դժվար թե վկայեն բուն Բուշեհրի ԱԷԿ-ի կառուցման հարցի հետ կապված հերթական ակցիայի մասին:

2007թ. մարտի 1-ին Ռուսաստանի Դաշնային խորհրդի Միջազգային հարցերով հանձնաժողովի նախագահ և հասարակական դիվանագիտության ոլորտում Կրեմլի տեսակետը ներկայացնող Միխայիլ Մարգելովը Վաշինգտոն ու Թեհրան կատարած իր այցերից հետո հայտարարեց, թե հնարավոր է, որ իրանական միջուկային ծրագիրը կրում է ռազմական

---

[1] Մարտի 19-ին ամերիկյան *«The New York Times»-ը* գրեց, թե իրանցիների հետ մարտի կեսերին կայացած բանակցություններում Ռուսաստանի Ազգային անվտանգության խորհրդի (ՌԴ ԱԱԽ) քարտուղար Իգոր Իվանովը միջուկային վառելիքի մատակարարման դիմաց պահանջել է դադարեցնել Իրանում ընթացող ուրանի հարստացման աշխատանքները:

[2] Այսօր ռուսական կողմը խոսում է նշված մեկնարկների առնվազն երկամսյա հետաձգման մասին:

[3] Ըստ որոշ տեղեկությունների՝ նոր ԱԷԿ-ը գտնվելու է Իրանի Խուզեստան նահանգում (սահմանակից է Իրաքին ու Պարսից ծոցին):

[4] Գործակալությունը, որի ղեկավարն է Ռուսաստանի նախկին վարչապետ Սերգեյ Կիրիենկոն, պատասխանատու է նաև ատոմային ոլորտում Ռուսաստան-արտերկիր համագործակցության համար:

բնույթ, և այդ առումով չի բացառվում Իրանի դեմ ամերիկյան ռազմուժի կողմից կետային հարվածների իրականացումը:

Մարտի 18-ին ՌԴ ԱԱԽ քարտուղար Իգոր Իվանովը հայտարարեց բառացիորեն հետևյալը. «18 տարվա ընթացքում Իրանում [միջուկային ոլորտում] ընթացել են մշակումներ, որոնք չեն գտնվել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) վերահսկողության ներքո: Եվ մենք պնդում ենք, որ առաջացած հարցերին պատասխան տրվի»:

Ուշադրության է արժանի նաև մարտի 21-ին Ռուսաստանի Աշխարհաքաղաքական գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, ռուսական Գլխավոր սպայակույտի Միջազգային հարաբերությունների բաժնի նախկին պետ Լեոնիդ Իվաշովի հրապարակումը *«РИА-Новости»* գործակալությունում, թե առաջիկայում Պենտագոնը ծրագրում է օդային զանգվածային հարվածներ հասցնել Իրանին:

Եվ վերջապես, մարտի 26-ին Մոսկվայում Ռուսաստանի ու Չինաստանի նախագահներ Վլադիմիր Պուտինի և Հու Ջինտաոյի համատեղ հռչակագրում կողմերը կոչ են անում Իրանին իրականացնել ՄԱԿ ԱԽ և ԱԷՄԳ Տնօրենների խորհրդի պահանջները՝ ուրանի հարստացման աշխատանքների դադարեցման մասին:

## *Հետևություններ*

Ստեղծված իրավիճակում ոչ միայն աճել է ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների կողմից Իրանին ռազմական հարվածներ հասցնելու հավանականությունը, այլև առկա հանգամանքներն այնպիսին են, որ ժամանակի ընթացքում այդ հավանականությունն ավելի է մեծանալու:

Ներկայումս ռուս-իրանական հարաբերություններում չկա խնդրահարույց այնպիսի ուղղություն, որը պատճառ հանդիսանար վերը նշված հակասությունների համար: Այդ իմաստով հակասությունների պատճառը պետք է նախևառաջ փնտրել Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող զարգացումներում:

Պատժամիջոցների ընդլայնմանը կողմ քվեարկելով՝ Մոսկվան հրապարակավ ընդունում է, որ իրանական միջուկային ծրագիրը որոշակիորեն ռազմական բնույթ ունի, ինչը չի կարող չխոսել ԱՄՆ օգտին, իսկ այդ հանգամանքը չեն կարող չհասկանալ Ռուսաստանում:

Թեև չի բացառվում, որ Մոսկվայում փորձում են Իրանի նկատմամբ նման ճնշման միջոցով նվազեցնել ռազմական հարվածի կիրառման հավանականությունը (հետևաբար, Մոսկվայում իրատեսական են համարում ռազմական հարվածի տարբերակը), սակայն ռուսական քաղաքականության մեջ վերը ներկայացված փոփոխությունը լիովին կարող է վկայել, թե Կրեմլում վստահ են, որ Իրանը շատ մոտ է միջուկային զենքի ստեղծմանը կամ առավել ևս՝ ձեռնամուխ է եղել արդեն իսկ առկա միջուկային ռազմական կարողությունների ընդլայնմանը:

Բացի այդ, հեռանկարային առումով Ռուսաստանին ձեռնտու չէ միջուկային Իրանի երևան գալը, որը կթուլացնի սեփական կախվածությունը Մոսկվայից և Ռուսաստանի համար կարևոր՝ հարավկովկասյան ու կենտրոնաասիական տարածաշրջաններում կարող է վարել ռուսական շահերին չհամընկնող քաղաքականություն:

Իրավիճակի սրացման և ռազմական հարվածի հավանականության աճի մասին են վկայում նաև Մերձավոր Արևելքում ամերիկյան ռազմական կարողությունների[1] ու Իրանի դեմ տարվող տեղեկատվական-հոգեբանական կամպանիայի ընդլայնումը, ինչպես նաև Իրանին հարակից Իրաքում ու Աֆղանստանում անկայուն իրավիճակի խորացումը[2]:

Նշվածի համատեքստում, հատկապես Իրաքում որպես ահաբեկչական գործողությունների թիրախ-խումբ բարձրաստիճան պաշտոնյաների առանձնացումը (ինչն, ընդհանուր առ-

---

[1] Հարկ է նաև այս համատեքստում դիտարկել Հարավային Կովկասում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի մասը հանդիսացող ռադարի տեղակայման մասին տեղեկատվությունը:

[2] Որոշ տեղեկությունների համաձայն՝ Թեհրանում գտնվող օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները ձեռնամուխ են եղել ռազմական գործողությունների դեպքում Իրանի մայրաքաղաքից սեփական անձնակազմի դուրսբերման ծրագրերի մշակմանը: Եթե սույն տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, ապա այն կարող է լուրջ ցուցիչ լինել Իրանի դեմ հավանական ռազմական ակցիայի առումով: Ի դեպ, նույն կարգի ցուցիչ կարող է լինել Բուշեհրի ԱԷԿ-ից ռուս մասնագետների հեռացումը:

մամբ, նոր երևույթ է) կարող է խոսել առաջիկայում իրավիճակը կտրուկ կերպով ապակայունացնելու մասին.

- փետրվարի 26-ին Բաղդադում կայացած ահաբեկչական գործողության արդյունքում վիրավորվեց Իրաքի փոխնախագահ Ադել Աբդուլ-Մահդին,
- փետրվարի 27-ին Աֆղանստանի մայրաքաղաք Քաբուլից հյուսիս գտնվող ամերիկյան օդուժի «Բաղրամ» հենակետի նկատմամբ, ուր այդ պահին գտնվում էր ԱՄՆ փոխնախագահ Դիք Չեյնին, ահաբեկչական խոշոր գործողություն կատարվեց,
- մարտի 22-ին մահափորձ կազմակերպվեց Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալիքի ու այդ պահին վերջինիս հետ մամլո ասուլիսին մասնակցող ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունի դեմ (իրթիռը պայթել էր վարչապետի՝ Բաղդադում գտնվող տնից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա),
- մարտի 23-ին դարձյալ Բաղդադում կայացած ահաբեկչական գործողության արդյունքում վիրավորվեց Իրաքի փոխվարչապետ Սալյամ ազ-Զուբաին:

*Սարգիս Հարությունյան*
*«Նորավանք» հիմնադրամ*

# ГОНКА ПРОТИВОРАКЕТНЫХ ВООРУЖЕНИЙ

Вопросы, связанные с размещением американских систем ПРО в Европе, становятся одними из самых актуальных военно-политических вопросов. Решение о строительстве баз ПРО США на территории Польши и Чехии привело к очередной конфронтации между Вашингтоном и Москвой. После так называемой Мюнхенской речи Путина снова стали поговаривать о начале новой холодной войны. В то же время, чаще всего намерения Соединенных Штатов анализируются как обычная угроза России и стремление усилить давление на Москву.

### *ПРО ближе к конфликтам*

Официальная цель Соединенных Штатов – создание в Восточной Европе противоракетной системы для защиты от Ирана. По информации Пентагона, Иран уже обладает ракетными силами, способными достичь территории ряда стран НАТО, а к 2015 году Тегеран, согласно прогнозам, будет способен угрожать самим США.

На сегодняшний день Вашингтон намерен максимально продвинуться на восток со своей системой ПРО. В Польше предполагается разместить базу противоракет (10 систем), а в Чехии – радиолокационную станцию слежения. Развертыванием базы в Польше вероятнее всего займется компания *Boeing* и проект обойдется Пентагону в $2-2,5 млрд. Чешская часть проекта будет стоить предположительно $500 млн. Строительство восточноевропейского блока ПРО начнется уже в 2008г., в 2011г. предполагается уже разместить в Польше первые противоракеты, а в целом система будет полностью готова в 2013г.

Между тем намерения Вашингтона идут дальше развертывания системы ПРО в Восточной Европе. Глава агентства по противоракетной обороне Пентагона генерал-лейтенант ВВС Генри Оберинг сообщил, что США намерены продолжить работу по разворачиванию глобальной системы ПРО. Причем, по словам генерала, у Белого дома есть намерения расположить базу ближе к горячим регионам, а именно на Кавказе.

При этом США не намерены получать разрешения на строительство системы ПРО у третьих стран, а также у НАТО и Евросоюза. В самом Евросоюзе сдержанно реагируют на сепаратные действия Польши и Чехии. Так, верховный представитель ЕС по внешней политике Хавьер Солана назвал спорным вопрос о существовании ракетной угрозы для стран европейского сообщества: «Каждое государство ЕС вольно одобрить те меры, которые оно хочет одобрить. На уровне Европы в целом мы не обсуждаем создание системы подобного рода». Президент Франции Жак Ширак также без оптимизма воспринял планы США: «Мы должны быть очень осторожными, чтобы не скатиться к новым линиям раздела Европы и старому порядку».

Система ПРО США начинается получать уже реальные очертания. На сегодня уже есть две базы противоракетной обороны на Аляске и в Калифорнии. Кроме того, системы раннего предупреждения размещены на территории Гренландии и Норвегии, в проекте намерена участвовать также и Великобритания. Однако система не ограничивается наземными станциями. Разворачивается космическая группировка, на сегодняшний день состоящая из спутников слежения. А ВМС обеспечивают другой эшелон защиты за счет размещения на 16 эсминцах и крейсерах системы наведения и управления ракетным огнем AEGIS.

### *Реакции*

Таким образом, следует признать, что политический прогресс в Европе играл важную роль в возрастающем благополучии Южного Тироля. Процесс европейской интеграции, основывающийся, в том числе, на признание границ, с включением совместной сельскохозяйственной политики, структурного фонда и программ сообщества, в значительной мере содействовали развитию политической стабильности и экономического процветания в Южном Тироле[1].

[1] Использованы материалы с сайта Гражданской сети Южного Тироля (Civic Network of South Tyrol): http://www.provinz.bz.it/english/default.htm.

# ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ
# ՀԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ժամանակներում, մանիպուլյացիոն տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, հաճախ զանգվածային լրատվամիջոցները հանդես են գալիս ոչ այնքան հասարակական կարծիքն օբյեկտիվ արտահայտողի, որքան այդ կարծիքը ձևավորողի դերում: Սա է պատճառը, որ վրացական ազգայնական մամուլի մի շարք օրգանների հետևողականորեն տարվող աշխատանքը Աբխազիայում հակահայկականության սերմանման ուղղությամբ չի կարող անտարբեր թողնել ՀՀ կառավարող շրջանակներին և փորձագետներին:

Աբխազահայության անվտանգության և ՀՀ պետական շահերի տեսանկյունից, անշուշտ, խիստ վտանգավոր են հայ-աբխազական հակասությունների հրահրումը, դրանց ամեն տեսակ դրսևորումներն ու անցանկալի զարգացումները:

Ներկայումս վրաց ազգայնական ընտրանու որոշակի հատվածի շրջանակներում նկատելի է հայության նկատմամբ անթաքույց անբարյացակամ վերաբերմունք, որն իր դրսևորումն է գտնում հակահայկական ոգով գրված հրապարակումներում: Դրանց թիվն օր օրի ավելանում է: Հակահայկականությունը դրսևորվում է մի շարք խնդիրների կամ թեմաների համատեքստում, որոնց զգալի մասն արդեն ավանդական դարձած մեղադրանքներ են հայության նկատմամբ և չեն հարուցում հայ հետազոտողների զարմանքը: Այդ թեմաներն են. հայության «նկրտումները» Թիֆլիսի նկատմամբ, հայկական գերակայություն հաստատելու «ձգտումները», ջավախահայութան «անջատողականությունը», հայերի ծրագրերը Վրաստանի տարածքի մի մասում «Մեծ Հայաստանի» ստեղծման նպատակով, ինչպես նաև վերջերս բավական հաճախակիացած նյութերը, որոնցում հեղինակները վրաց հասարակությանը տեղեկացնում են վրացական պատմության և մշակույթի նկատմամբ հայերի ունեցած «հավակնությունների» մասին:

***Բայց այս ավանդական թեմաներին վերջերս գումարվել է ևս մեկը, որն իրավամբ հետզհետե «պատվավոր տեղ» է զբաղեցնում վրացական հակահայկական հրապարակախոսության մեջ: Խոսքը վերաբերում է հայ-աբխազական հարաբերություններում սեպ խրելու վրաց ազգայնականների ակնհայտ ձգտումներին:***

Հարավային Կովկասի ուշագրավ առանձնահատկություններից մեկն այն է, որ սոցիալ-տնտեսական փոփոխություններն այստեղ ավանդաբար ձեռք են բերում ազգամիջյան երանգավորում: Այդ գործընթացները թե՛ անցյալում, թե՛ ներկա փուլում խթանում են միջէթնիկ և միջհամայնական հարաբերությունների վերաձևավորման շղթան, ինչն, անկասկած, նորանոր խնդիրներ է առաջադրում նաև միջպետական հարաբերությունների կարգավորման հարթությունում: Վերջերս հաճախակի են դարձել հրապարակումներն այն մասին, որ հայերը գրավել են ամբողջ Աբխազիան, ճնշում են աբխազներին, իրենց ձեռքում կուտակել են ահռելի դրամական միջոցներ, տիրապետում են զգալի կապիտալի, ինչը համապատասխանում է հայկական«զավթողական» ծրագրերին և ագրեսիվ բնավորությանը:

Հայտնի է, որ վրացական ազգայնականության ավանդական մոդելը հարուստ է հակահայկական բաղադրիչներով: Եվ այս առումով, թերևս, էական բացահայտումներ չկան: Այնուամենայնիվ, այդ մոդելը թարմացվում է նոր՝ առավել վտանգավոր երանգավորումներով, որոնք թելադրված են ներկայումս ստեղծված իրավիճակով:

Փորձելով աբխազական խնդրի լուծման համար օգտագործել բոլոր հնարավոր միջոցները՝ վրացական ազգայնական շրջանակները ձգտում են հակահայ հրապարակումներով հայ-

աբխազական հարաբերություններում սերմանել անվստահություն, թշնամանք, հնարավորության դեպքում՝ նաև միջհամայնական հակամարտություն:

Վրացի հեղինակ Թեյա Մարխվաիձեն, օրինակ, Թբիլիսիում հրատարակվող «Ախալի թաոբա» թերթի իր հոդվածում նշում է, որ հայերը վաղուց ի վեր ձգտել են գրավել Սև ծովի ափերը, և այսօր նրանք, ինչպես երբևէ, մոտ են իրենց երազանքին: Հեղինակը զգուշացնում է, որ առաջիկայում պետք է սպասել հայ-աբխազական հակամարտության պոռթկմանը Սուխումում և նրա շրջակայքում: Նա միաժամանակ զգուշացնում է, որ իրենք՝ վրացիները, դրանում մեղավոր չեն: Պատմությունից մեզ քաջ հայտնի է, թե առաջներում վրացական ազգայնական մամուլն ինչպես է վերաբերվել հայերին՝ անընդհատ շեշտելով, որ հայերը չափազանց խելացի են, խորամանկ ու հաջողակ: Եվ այստեղ էլ հեղինակը նշում է, որ հայերը միշտ իրենց շահերն են հետապնդում և սեփականաշնորհում են ամբողջ հողերը, և քանի որ աբխազները հայտնի «ծույլեր» են, հետևաբար, դա հայերին հաջողվում է: «Այսօր Աբխազիայում շքերթը ղեկավարում են հայերը»,- ամփոփում է վրացի հեղինակը: Վերջում հոդվածագիրը բացահայտում է իր հոդվածի հրապարակման իրական նպատակները. «Թող սպանեն իրար, մեզ դա, իհարկե, ձեռնտու է» («Ախալի թաոբա», դեկտեմբերի 20, 2006թ.):

Երբ հայերի նկատմամբ նման մեղադրանքներով բազմաթիվ հրապարակումներ էին հայտնվում անցյալում, օրինակ՝ 20-րդ դ. սկզբին, երբ տարածաշրջանում միջէթնիկ լարվածություն կար, ֆրանսիական «Թեմփս» լրագիրը դիպուկ մատնանշում էր հակահայկա-կանության արմատները՝ 1905թ. գրելով. «Այն ազգաբնակությունների մեջ, որոնք սարսափում են աշխատանքից, հայերը հրաշալիորեն գործունյա են. այն անձերի մեջ, որոնք գործ չեն հասկանում, հայերը սիրում են գործել և հաջողում են: Ահա նրանց հաջողության իսկական պատճառները, ահա իսկական պատճառները նրանց դեմ զգզվող ատելության»:

Հայ-աբխազական հարաբերությունների համատեքստում արժե նշել վրաց-աբխազական պատերազմում Բաղրամյանի անվան զնդի մարտական գործողությունների թեմայի մասին: Մեր ժամանակների հայտնի «հայագետ» Բոնդո Արվելաձեն զարմացնում է ընթերցողներին իր հայատյաց հրապարակումներով: «Վրաստան Օն-լայն» ինտերնետային կայքին տված հարցազրույցում նա հայտնում է, որ հայկական կողմը պարտավոր է պաշտոնապես դատապարտել Բաղրամյանի անվան զնդի՝ Աբխազիայում այդ պատերազմի տարիներին կատարած «հանցանքները» վրաց ժողովրդի նկատմամբ: Նա նշում է, որ վրաց ժողովուրդը երբեք չի ների հայերին այդ հանցանքը, ինչպես հայերը չեն ներում թուրքերին 1915թ. ցեղասպանությունը: Ակնհայտ է, որ նման համեմատությունն արդեն իսկ լուրջ քաղաքական և էթնոհոգեբանական վտանգներ է պարունակում: Մի կողմ թողնելով այս համեմատության անհեթեթ լինելը՝ նշենք միայն, որ այնուամենայնիվ, կա մի ընդհանրություն. թե՛ 1915թ. Օսմանյան կայսրության տարածքում և թե՛ 1992-1994թթ. վրաց-աբխազական պատերազմում խաղաղ հայ բնակչության դեմ կանգնած են եղել կառավարական զորքեր, ուղղակի առաջին դեպքում ինքնապաշտպանությունը կարող էր ավելի լավ կազմակերպված լինել:

Նույն հրապարակման առաջաբանում հայտարարվում է. «Բավական է մենք՝ վրացիներս, ջայլամի քաղաքականություն վարենք և զգուշավորություն ցուցաբերենք հայ-վրացական հարաբերություններին վերաբերող հարցերում, արդեն ժամանակն է իրերն իրենց անունով կոչենք: Եվ դրա ապացույցն էլ կլինի այն, որ շուտով Վրաստանում լույս կտեսնի վրացերենով և անգլերենով մի գիրք, որտեղ կնկարագրվեն Բաղրամյանի անվան զնդի հանցանքները վրաց ժողովրդի նկատմամբ Աբխազիայում»:

Աբխազիայում հայ-աբխազական լարվածության առաջին պտուղները երևացին անցյալ տարվա աշնանը, երբ պայթեցվեցին հայկական ներկայացուցչության շենքն ու հայկական դպրոցը:

Մեկ այլ հոդվածում («Ցիսկարի», թիվ 24, ապրիլի 5, 2006թ.) հեղինակ Մալխազ Գվելուկաշվիլին առաջ է քաշում այն տեսակետը, թե վրաց-աբխազական պատերազմն իրականում

հայ-վրացական էր: Փաստորեն, վրացիների շրջանում քայլ առ քայլ տարածվում է այն գաղափարը, թե վրացիների հիմնական թշնամին հայերն են: Այնուհետև նշվում է, թե Հայաստանը տարածաշրջանի այն միակ երկիրն է, որն ունի հստակ ձևակերպված շահեր ու ծրագրեր Կովկասում, և այդ ծրագրերի նպատակն է հայկական գերակայության հաստատումը, որն ավելի վտանգավոր է վրացիների համար, քան մահմեդականը: Փաստորեն, այդ հրապարակումներում հնչում են մեղադրանքներ նաև պաշտոնական Երևանի հասցեին, թե այդ «նկրտումներն» ուղղորդվում են այստեղից:

Ակնհայտ է, որ վրացիները ներկայումս, ունենալով տարածաշրջանում ավանգարդի դերը ստանձնելու ձգտում, իրենց այդ «առաքելության» իրականացման ճանապարհին ամենահիմնական մրցակից ընկալում են ոչ թե մահմեդական աշխարհը (Թուրքիա, Ադրբեջան), այլ Հայաստանն ու հայությունը:

Հավելենք «Միջազգային և ռազմավարական հետազոտությունների վրացական հիմնադրամում» հայ փորձագետների հետ հանդիպման ժամանակ հիմնադրամի տնօրեն, արևելագետ պրն Ռոնդելիի արտահայտությունը, թե՝ «անկախացումից հետո մենք վախենում էինք, որ դուք՝ հայերդ, կզրավեք ամբողջ Կովկասը»:

*Թամարա Վարդանյան*
*«Նորավանք» հիմնադրամ*

# «ԾՊՏՅԱԼ» ՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ (ԸՍՏ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ)

Վերջին տարիներին տարբեր շրջանակներում բավականին աշխուժացել է հետաքրքրությունը Թուրքիայում բնակվող իսլամացած և «ծպտյալ» հայերի նկատմամբ[1]: Հարկ է նշել, որ արդեն տևական ժամանակ է, ինչ հենց այդ հայերի սերունդները սկսել են ինքնաբացահայտվել՝ փնտրել իրենց արյունակիցներին, ազգականներին, իսկ Եվրամիության անդամակցությանը ձգտող Թուրքիայում ներկայումս արտաքուստ խրախուսվող, սակայն թվացյալ ազատության սահմանները բոլոր դեպքերում նպաստում են դրան: Տարիներ շարունակ այս թեմաների նկատմամբ Թուրքիայում գործադրված արգելքը սկսում է ճաքեր տալ և պատճառ դառնալ «էթնիկ պատկանելության ճգնաժամի» ի հայտ գալուն: Հրանտ Դինքը այս հանգամանքը դիպուկ է բնութագրել՝ ասելով. «Ներկայումս Թուրքիայում շատերը դեգերում են իրենց էթնիկ պատկանելության լաբիրինթոսում»:

Օրեցօր նոր ծավալներ ընդգրկող այս հարցն արդեն իր արտացոլումն է գտել թուրք ժամանակակից գրականության մեջ, և մի շարք հեղինակներ, ինչպիսիք են Ֆեթհիյե Չեթինը, Իրֆան Փալալըն, Քեմալ Յալչընը, անդրադառնում են իսլամացած ու «ծպտյալ» հայերի խնդրին: Հիշյալ հեղինակների ստեղծագործությունները, ունենալով փաստագրական հիմք, կարևոր են խնդրի համակողմանի լուսաբանման համար, սակայն ասենք, որ դրանցում (թերևս, որոշ բացառություն կարելի է համարել Ֆեթհիյե Չեթինի «Մեծ մայրս» վիպակը) երբեմն դրվում են նաև քողարկված ենթատեքստեր, որոնք, վրիպելով սովորական ընթերցողների աչքից, տեղիք են տալիս ավելորդ հիացական գնահատականների: «Ծպտյալ» և իսլամացած հայերի խնդիրը սկսել է լրջորեն մտահոգել նաև թուրք գիտական շրջանակներին[2], և սրա վկայությունն են այն ուսումնասիրությունները, որոնք արվում են այս ուղղությամբ ներկայումս: Այսպես, արդեն տպագրված մի շարք հոդվածների կողքին, 2006 թվականին Ստամբուլում լույս է տեսել և արդեն հասցրել վերահրատարակվել թուրք լրագրող Էրհան Բաշյուրթի «Հայ որդեգիրները» գիրքը, որտեղ քննության է առնվում Հայոց ցեղասպանության ժամանակ իրենց ծնողներից խլված կամ որբ մնացած, այնուհետև բռնի իսլամացված և թուրքերի ու քրդերի կողմից որդեգրված հայ երեխաների խնդիրը: Հիշյալ գրքում, որը, թերևս, այս թեմայով հրատարակված առաջին գիտական աշխատանքներից է, ներկայացված են հետաքրքիր որոշ փաստեր ոչ միայն իսլամացած, այլև «ծպտյալ» հայերի մասին: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, թուրք լրագրողը չի խուսափել կողմնակալ, անհիմն գնահատա-

---

[1] Իսլամացած հայ ասելով (խոսքն ավելի վաղ իսլամացած համշենահայերի մասին չէ) նկատի ունենք Հայոց ցեղասպանության ժամանակ առևանգված հայ կանանց, երեխաներին, որոնք իսլամացվելով՝ ամուսնացել են թուրքերի և քրդերի հետ. սրա հետևանքով ներկայիս Թուրքիայում ձևավորվել է խառնածինների մի հոծ բանակ, որոնց մի մասն ընդունում է իր կիսահայկական ծագումը, իսկ մի մասը՝ ժխտում կամ փորձում է կարևորություն չտալ դրան: Բռնի խլված և իսլամացած հայ երեխաները թուրքական աղբյուրներում անվանվում են «որդեգիրներ»: Իսկ «ծպտյալ» հայերը ցեղասպանության ժամանակ առերես իսլամ ընդունած, արտաքուստ թուրք, քուրդ մուսուլման ներկայացող, բայց գերակշիռ դեպքերում իրենց ազգային-կրոնական նկարագիրը գաղտնի շարունակող, ներփակ համայնքներով ապրող, խառնամուսնություններից խուսափող մեր ազգակիցներն են, որոնք իսլամ ընդունելու միջոցով զերծ են մնացել կոտորվելուց և տասնամյակների ընթացքում՝ հիմնականում խուսափելով ձուլումից, կարողացել են հայկականությունը շարունակել մինչև մեր օրերը:

[2] Ավելորդ չէ նշել, որ թուրքական պատմական ընկերության նախագահ, հայտնի պատմակեղծարար Յուսուֆ Հալաչօղլուն «Միլլիյեթ» թերթի 25.02.2007 համարում անհանգստություն է հայտնել Հրանտ Դինքի թաղման արարողության մասնակիցների թվաքանակի ու հնչեցված «բոլորս հայ ենք» կարգախոսի վերաբերյալ: Ըստ Հալաչօղլուի՝ Դինքի թաղման արարողությանը մոտավորապես 50000-անոց հայկական համայնքից կարող էր մասնակցել 20000 հայ և 10000 էլ իրենց բողոքի ձայնը անկեղծ բարձրացնող թուրքեր, այսինքն՝ մոտ 30000 մարդ: «Իսկ ովքե՞ր են մնացածները,- հարցնում է Հալաչօղլուն և ավելացնում,- անհրաժեշտ է այժմ այս ամենը շատ լավ ուսումնասիրենք և իմանանք»: Այնուհետև, մեջբերելով Դինքի այն միտքը, թե Թուրքիայում մուսուլման հայեր էլ կան, Հալաչօղլուն կասկած է հայտնում, թե միգուցե թաղման թափորի մնացած մասնակիցներն այդ հայերն են եղել և առաջարկում, որպեսզի պետական հետազոտական հաստատությունները դրան գնահատական տան:

կաններից, փաստերի խեղաթյուրումներից, քաղաքական ենթատեքստերից և այլն: Բայց և այնպես, աշխատանքի շահեկան կողմերից կարելի է համարել այն, որ սույն գրքում «ծպտյալ» հայերի մասին ձեռք ենք բերում որոշակի աղբյուրներ, որոնք գալիս են լրացնելու այս խնդրի վերաբերյալ մեր ունեցած սակավաթիվ նյութերի շրջանակը: «Ծպտյալ» հայերի վերաբերյալ մանրամասն ուսումնասիրության կարելի է հանդիպել նաև Հաքան Գյուվենի «Աքսիոն» հանդեսում տպագրված (14.03.2005) «Վերադառնում են իրենց իրական կրոնին» վերնագրով հոդվածում, որից էլ ընդարձակ մեջբերումներ են արված նաև Բաշյուրթի վերոնշյալ գրքում: «Ծպտյալ» և իսլամացած հայերի մասին «Տատս հայ էր» վերնագրով ընդարձակ հոդվածով է հանդես եկել նույն Էրհան Բաշյուրթը «Աքսիոն» հանդեսի մեկ այլ (26.12.2005) համարում: Այս և նման այլևայլ հրապարակումները ցույց են տալիս, որ թուրքական տարբեր շրջանակներ հետաքրքրված են և մեծ ուշադրությամբ հետևում են «ծպտյալ» հայերի շրջանակներում կատարվող յուրաքանչյուր զարգացմանը:

Վերը նշվածի խոսուն վկայությունն է այն հանգամանալից հետազոտությունը, որ կատարվել է Թուրքիայում՝ իսլամից հրաժարված և այլ կրոն՝ հիմնականում քրիստոնեություն ընդունած քաղաքացիների մասին: Այս խնդիրը քննության է առնվել նաև միսիոներական շարժման նոր թափ ստանալու համատեքստում: Հետազոտության մեջ ներկայացված է, թե Թուրքիայում եկեղեցու վերածված ինչքան տներ են գործում, քանի Ավետարան է բաժանվել մարդկանց և այլն: Սրանով փորձ է արվել պատասխանել նաև բավականին աշխուժորեն քննարկվող «քրիստոնեություն ընդունող թուրքեր» խնդրին, և ի վերջո եկել են այն եզրակացության, որ կրոնափոխվածների գերակշիռ մասը ոչ թե թուրքեր են, այլ Թուրքիայում ապրող այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ (հայեր, հույներ, ասորիներ): Նշված հետազոտության ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրվել են բնակչության գրանցամատյանները, ավելի քան 100 տարվա ընդգրկմամբ, որպեսզի տրվի այս հարցերի հստակ պատասխանը: Արդյունքում՝ հայտնի են դարձել նաև հայերիս համար հետաքրքիր որոշ տվյալներ. այսպես, պարզվել է, որ 1916–2004թթ. ընթացքում Թուրքիայում իսլամից պաշտոնապես հրաժարվել է մոտ 2000 քաղաքացի և մանրամասն ուսումնասիրությունը ի հայտ է բերել, որ նրանց մեծ մասը կամ ավելի կոնկրետ՝ 1340-ը, ծագումով հայեր են, որոնք վերընդունել են քրիստոնեություն: Հետազոտողները եկել են այն եզրահանգման, որ վերոնշյալ 1340 հայերը ոչ թե կրոնափոխ են, այլ կրոնադարձ, քանի որ բնակչության գրանցամատյանների ուսումնասիրության ընթացքում (ընդ որում՝ նաև Օսմանյան ժամանակաշրջանի) վեր է հանվել այդ կրոնադարձների մինչև 3-րդ, 4-րդ պորտի նախնիների էթնիկ և կրոնական պատկանելությունը, և պարզվել է, որ հիշյալ մարդիկ ծագումով հայեր են, որոնց նախնիները Հայոց ցեղասպանության ժամանակ առերես ընդունել են իսլամ, որպեսզի ազատվեն աքսորից ու կոտորածից, իսկ իրականում շարունակել են գաղտնի պահել քրիստոնեական ավանդույթները. այլ խոսքերով ասած՝ դրանք «ծպտյալ» կամ «կրիպտո» հայերն են:

Ե՛վ Էրհան Բաշյուրթի գրքում, և՛ Հաքան Գյուվենի հոդվածում ամենայն մանրամասնությամբ ներկայացված է անգամ կրոնադարձության աշխարհագրությունը: Այսպես, կրոնադարձությունն ավելի շատ կատարվել է Ստամբուլում, ապա դրան հետևում են Դիարբեքիրը, Ադըյամանը, Բաթմանը, Սիվասը (Սեբաստիա), Թունջելին և Մալաթիան: Ավելին, Ստամբուլում կրոնադարձությունն ուսումնասիրել են նաև ըստ թաղամասերի, և արդյունքում պարզվել է, որ կրոնադարձներն ավելի շատ գրանցված են Ստամբուլի Ֆաթիհ թաղամասում (մոտ 150 մարդ), որին հետևում են Շիշլի և Էմինօնյու թաղամասերը: Ավելորդ չի լինի ներկայացնել նաև «ծպտյալ» հայերի կրոնադարձության մի քանի կոնկրետ փաստեր, որոնք տեղ են գտել հիշյալ աղբյուրներում.

– 1971 թվականին Թունջելի նահանգի Դոլուքյուփ գյուղում գրանցված 1947թ. ծնված, էթնիկ հայ Սեֆեր Աքյուզը, որ շրջապատում հայտնի է եղել որպես մուսուլման, դիմելով քաղաքացիական հարցերով Ստամբուլի 1-ին ատյանի դատարան, հրաժարվել է իսլամից և ընդունել քրիստոնեություն: Այնուհետև մի քանի տարվա ընթացքում նույն ընտանիքից 34 հոգի ևս ընդունել են քրիստոնեություն:

– 1995 թվականին Յոզգաթ նահանգի Բողազլըյան գավառում գրանցված Հաջի Սարըքայան ընդունել է քրիստոնեություն, իսկ նրանից մի քանի տարի առաջ և մի քանի տարի հետո նույն քայլին են դիմել նաև նրա 14 ազգականները: Վերջինը քրիստոնեության է անցել Օզնուր Սարըքայան, 2003 թվականին:

– Սասունում գրանցված Ջենգիլների ընտանիքից 1975-ից մինչև 2003 թվականը 9 մարդ ընդունել են քրիստոնեություն:

– Պատահում է նաև, որ կրոնի հետ միասին փոխում են նաև անունները և ընդունում հայկական անձնանուններ: Օրինակ, Էլյազիգի նահանգի Քեբան գավառում գրանցված Թյուրքան Աքջան, 1995 թվականին ընդունելով քրիստոնեություն, փոխում է նաև անունը՝ դառնալով Մարիամ Սարգսյան:

– 1993 թվականին Թունջելիում գրանցված 84-ամյա Մուսթաֆա Աթեշը, որը մասնակցել է նաև 1937թ. Դերսիմի ապստամբությանը՝ «դարբին Մուսթաֆա» անունով, վերադարձել է քրիստոնեության:

– Կրոնադարձվածների ցուցակում մեր հանդիպած տարիքով ամենափոքրը 2004 թվականի փետրվարի 19-ին ծնված, Ստամբուլում գրանցված Մելիսա Չաքըրն է, որի ծնողների (Սյուզան և Սարգիս) 2004 թվականի մայիսի 27-ի դիմումի համաձայն՝ փաստաթղթերում փոխվել է նրա կրոնական պատկանելությունը:

Ի դեպ, գրեթե բոլոր կրոնադարձված հայերին ներկայացնելիս տրվում է նաև նրանց տոհմածառը:

Վերոնշյալ փաստերից պարզ է դառնում, որ երբեմն կրոնադարձվում են ամբողջ ընտանիքով, ազգականներով: Սակայն պատահում է նաև, որ միևնույն ընտանիքից կրոնադարձվում են ոչ բոլորը և ստացվում է տարօրինակ պատկեր, երբ, օրինակ, հինգ եղբայրներից երեքը, բացահայտելով իրենց հայկական ծագումը, ընդունել են քրիստոնեություն, իսկ մյուս երկու եղբայրները շարունակում են գրանցված մնալ իբրև մուսուլմաններ:

Թուրք հետազոտողներն ուշադրություն են հրավիրում նաև մի շարք այլ հանգամանքների վրա. օրինակ, արձանագրվել է, որ «ծպտյալ» հայերը մեծ թիվ են կազմում հատկապես քրդերի և ալևիների շրջաններում: Նշվում է, որ մեր «ծպտյալ» ազգակիցները, համարյա առանց բացառության, խուսափում են խառնամուսնություններից, նախընտրում են ներքին ամուսնություններ, այսինքն՝ ձգտում են ամուսնանալ միայն իրենց բախտակից «ծպտյալ» հայերի հետ, ինչը նրանց հնարավորություն է տալիս շարունակել հայ-քրիստոնեական ավանդույթները և մաքուր պահելով արյունը՝ ի վերջո էթնիկ հայ մնալ: Բացի այդ, կյանքի այս ներփակ բնույթը թույլ է տալիս դեռևս չբացահայտված «ծպտյալներին» գաղտնի պահել իրենց իրական էթնիկ պատկանելությունը և շարունակել արտաքուստ ներկայանալ որպես թուրք և քուրդ մուսուլման:

Թուրքական աղբյուրները ևս մի հետաքրքիր նրբերանգի վրա են ուշադրություն հրավիրում՝ արձանագրելով, որ «ծպտյալ» հայերը ձգտում են ձեռք բերել մեկից ավելի գրանցում, բացի այդ, հաճախ փոխում են գրանցումը՝ այդ կերպ փորձելով «կորցնել հետքերը»: Հայտնի է, որ թուրքական համապատասխան գերատեսչություններում կրոնափոխ, որդեգիր հայերն ու նրանց սերունդները[3] հատուկ գրանցված են, և դա արված է նաև այն նպատակով, որպեսզի իշխանությունների համար անվստահելի այս խմբից մարդիկ չգրավեն պատասխանատու պաշտոններ և չունենան լծակներ ու, բացի այդ, մնան մշտական հսկողության տակ:

«Ծպտյալ» հայերի կրոնադարձության դեպքերին անդրադառնալիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ երկու հանգամանքների վրա.

[3] Թուրքիայում բազմաթիվ են դեպքերը, երբ իրենց ծնողների կրոնափոխ, այսինքն՝ հետագայում իսլամ ընդունած լինելը պարզվում է այն ժամանակ, երբ նրանց զավակները դիմում են պատասխանատու պաշտոն ստանձնելու կամ զինվորական աշխատանքի անցնելու համար և ստանում մերժում իրենց ծնողների հավատափոխ լինելու հանգամանքով պայմանավորված: Նման դեպքերում ծնողների տարիներով թաքցրած գաղտնիքը բացահայտվում է, և բարեպաշտ մուսուլմանի համարում ունեցող կամ իրեն զտարյուն թուրք կարծող մարդիկ ապրում են հոգեբանական խոր ճգնաժամ:

1. Ըստ իսլամի, այն մարդիկ, որոնք, ընդունելով մուսուլմանություն, այնուհետև հրաժարվում են այդ հավատից, ենթակա են մահապատժի: Սակայն քանի որ Թուրքիան կրոնապետություն չէ, ուստի այդ պատիժը չունի օրենքի ուժ, սակայն դա չի բացառում այն, որ իսլամից հրաժարվածները կրոնական ծայրահեղականների կողմից կարող են ընկալվել որպես թիրախներ: Բացի այդ, հոգեկան առումով չափազանց դժվար է «ծպտյալներին»՝ արտաքին աշխարհից շարունակ թաքցնել իրենց էթնիկ և կրոնական պատկանելությունը, բայց, միևնույն ժամանակ, հեշտ չէ նաև թուրքական իրականության պայմաններում բացահայտ ապրել որպես հայ-քրիստոնյա: Այսինքն՝ այս կրոնադարձությունը նույնիսկ Եվրամիության անդամակցությանը ձգտող Թուրքիայում պետք համարել որոշակի խիզախություն: Հարկ ենք համարում ավելացնել նաև, որ կրոնադարձության դեպքեր են գրանցվում նաև Եվրոպա արտագաղթած «ծպտյալ» հայերի շրջանակներում. եվրոպական ազատության պայմաններում այդ քայլին դիմելը, ինչ խոսք, շատ ավելի հեշտ է և անվտանգ:
2. Շատ հաճախ «հայ» և «քրիստոնյա» հասկացությունները նույնացվում են: Հենց այս պատճառով էլ «ծպտյալ» հայերի կրոնադարձությունն ինչ-որ առումով կարելի է համարել նաև վերադարձ դեպի ազգային ակունքներ՝ ազգադարձություն: Հայոց ցեղասպանությունից ավելի քան 90 տարի հետո էլ՝ ապրելով և մաքառելով անասելի դժվարին պայմաններում, առերես կրոնափոխված «ծպտյալ» հայերը կարողացել են պահպանել ազգային-կրոնական նկարագրի շատ շերտեր և դրանք փոխանցել սերունդներին:

*Ռուբեն Մելքոնյան*

# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԲԱՂԴԱԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՏԵՆԱՊԵՏ ՎԵՀՈՒՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ

2003թ. ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացմամբ սկիզբ առած պատերազմական իրավիճակը մի կողմից՝ ամերիկյան զորքի և ապստամբների միջև, մյուս կողմից՝ միջդավանական և միջէթնիկ հակասությունները ստեղծել են քաոսային և անիշխանության իրավիճակ, որից տուժում են ոչ միայն սուննի և շիա մահմեդականները, այլև քրիստոնյաները, այդ թվում՝ հայերը:

Իրաքահայերը հայտնվել են անելանելի բարդ իրավիճակում. չկան աշխատանք, անվտանգության երաշխիք և հեռանկար՝ այդ երկրում ազգային գոյապահպանության համար: Նրանցից շատերը ճարահատյալ հեռանում են երկրից: Բազմաթիվ իրաքահայեր կան այսօր Հորդանանում, Սիրիայում, Լիբանանում: Շատերը փոխում են բնակավայրը և հաստատվում քրդաբնական հյուսիսային շրջաններում:

Հաշվի առնելով մեզանում իրաքահայ համայնքի վերաբերյալ տեղեկատվության սղությունը՝ փորձեցինք կապ հաստատել իրաքահայ համայնքի հետ: Մեր հարցերին (*e-mail*-ով) պատասխանեց Բաղդադի ազգային կենտրոնական վարչության փոխատենապետը:

*- Քանի՞ հայկական եկեղեցի և ազգային միություն կա այսօր Իրաքում, և ի՞նչ վիճակում են դրանք այսօր:*

- **Բաղդադում** կան 4 եկեղեցի (ամենահինը կառուցվել է 1638թ.) և հինգ միություն: **Մոսուլում** կա 2 եկեղեցի, որոնցից մեկը կառուցվել է 1857-ին: Իսկ մյուսը նորակառույց էր, որը նախքան օծվելն ու բացվելը քանդվեց և կողոպտվեց տեղական հանցագործների կողմից: **Բասրայում** կան մեկ եկեղեցի, որ կառուցվել է 1736-ին, և 2 միություն: **Քիրքուքում** կա մեկ եկեղեցի: **Ավզրուքը** զուտ հայաբնակ գյուղ է և ունի մեկ եկեղեցի և մեկ միություն: **Զախոյում** կա մեկ եկեղեցի:

*- Ի՞նչ վիճակում են ազգային վարժարաններն ու միությունները:*

- Արդեն երեք տարի է, ինչ վերաբացվել է Բաղդադի ազգային վարժարանը: Սա հայկական միակ դպրոցն է (ունի 150 աշակերտ- *Ա.Փ.):* Ինչ վերաբերում է միություններին (և ընդհանրապես եկեղեցիներին), ապա դրանք մասամբ են գործում:

*- Իսկ դպրոցներում հայերեն դասավանդվո՞ւմ է:*

- Վերոհիշյալ բոլոր շրջանների պետական դպրոցներում հայ աշակերտներին դասավանդվում է հայերեն և կրոն:

*- Որքա՞ն հայություն կա այսօր Իրաքում:*

- Ստույգ թիվ չունենք, սակայն ենթադրում ենք, որ շուրջ 18 հազար, որ բնակվում են Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Քիրքուքում, Զախոյում, Դոհուքում և Ավզրուք հայաշատ շրջաններում:

*- Արդյո՞ք հնարավոր է, որ իրաքահայերը վերջնականապես հեռանան երկրից՝ հաշվի առնելով ստեղծված քաոսային և անհեռանկար իրավիճակը:*

- Խոսքը ոչ թե հեռանալու, այլ ժամանակավոր հեռանալու մասին է:

*- Դուք տեղյա՞կ եք, թե 2003-ից ի վեր որքան են զոհերը հայերի շրջանում:*

- 2003-2006թթ. ընթացքում Բաղդադում տարբեր պատճառներով մահացած հայերի թիվը 360 է:

*- Իրաքահայ համայնքը սպառնալիքների ենթարկվո՞ւմ է:*

- Համայնքի դեմ որևէ սպառնալիք չի եղել ո՛չ անցյալում և ո՛չ էլ ներկայում (չհաշված հանցագործ խմբերի գործունեությունը): Ընդհակառակը, պետությունը բարյացակամ է բոլոր փոքրամասնությունների, այդ թվում՝ քրիստոնյաների նկատմամբ:

*- Փաստորեն, իրաքահայ համայնքն առաջին անգամ չէ, որ բախվում է դժվարություննե-րի: Իրաքահայերը մեծապես տուժեցին նաև իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ: Կա՞ն ստույգ տվյալներ պատերազմում իրաքահայերի կորուստների մասին:*

- Իրաքա-իրանյան պատերազմի ժամանակ նահատակվել է 104 իրաքահայ:

*- Ի՞նչ ծրագրեր կան իրաքահայության հետագա գործողությունների վերաբերյալ:*

- Մշակված ծրագիր չկա: Եթե երկրի ներկա վիճակը շարունակվի այս կերպ, արտա-գաղթն էլ պիտի շարունակվի:

***

Իրաքահայության ներկա վիճակի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն փոխանցեց նաև Երևանում գործող **Իրաքահայերի միության փոխնախագահ, ԵՊՀ դասախոս Երվանդ Մինասյանը** (նա 1970-ականներին ներգաղթել է Հայաստան): Նա նշեց, որ իր ընկեր Պերճ Կիրակոսյանի միջոցով (ով իրաքյան իշխանություններին մոտիկ կանգնած մարդ է), իրենք (միությունը) մի նամակ են հղել Իրաքի նախագահ Թալաբանիին՝ խնդրելով Հայաստանում նույնպես բացել Իրաքի դեսպանություն՝ իմանալով, որ այն 30 երկրների ցանկում, որտեղ Իրաքը պատրաստվում է վերականգնել (կամ հիմնել) իր դեսպանությունները, Հայաստանի անունը չկա: Իրաքյան նոր կառավարությունը փորձել է հայերին ներգրավել խորհրդարա-նում, մասնավորապես՝ Պերճ Կիրակոսյանին, սակայն վերջիններս հրաժարվել են:

Հայաստան ներգաղթած իրաքահայերը պետության և հասարակության օժանդակության խիստ կարիքն են զգում: Ամեն շաբաթ Հալեպից օդանավով տասնյակ իրաքահայեր են գալիս Հայաստան: Իրաքից Հայաստան ներգաղթածների վիճակը բարդ է ոչ միայն նյութական ու բարոյական, այլև իրավական տեսակետից: Նրանք ստիպված են լինում հեռանալ երկրից, երբ վերջանում է իրենց մոտ եղած գումարը, քանի որ աշխատանք գտնել Հայաստանում գրեթե հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով Իրաքի մեր հայրենակիցները Հայաստանն օգտագործում են որպես ժամանակավոր հանգրվան: Չնայած ներգաղթածների համար առաջին մի քանի տարիներին օրենքով նախատեսված են հարկային և մի շարք այլ արտոնություններ, սակայն գործ սկսելուց շատ չանցած սփյուռքահայերը բախվում են լուրջ դժվարությունների: Ե.Մինա-սյանը համոզված է, որ իրաքահայերին որոշակի (ասենք՝ հարկային) արտոնություններ տալու դեպքում նրանցից շատերը կցանկանային հաստատվել Հայաստանում:

***Արայիկ Փաշայան***
***«Նորավանք» հիմնադրամ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԱՃԻ ՄՈԴԵԼ

*Հետազոտությունն իրականացվել է «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի պատվերով*

Հետազոտության հիմնական նպատակն է մշակել Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի էկոնոմետրիկ մոդել և այն օգտագործելով՝ կանխատեսել ոլորտի հիմնական տնտեսական ցուցանիշները միջինժամկետ հեռանկարում:

## *Համաշխարհային ՏՏ ոլորտի հիմնական միտումները և Հայաստանի մարտահրավերները*

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանխատեսվում է տեղեկատվական տեխնոլոգիաների արտապատվիրման *(outsourcing)* համաշխարհային շուկայի զգալի աճ $130 մլրդ-ից մինչև $185 մլրդ 2010թ.: Պատվերների հիմնական հոսքը լինելու է զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ: Արտասահմանյան արտապատվիրման պայմանագրեր ստանալու համար զարգացող երկրների միջև ծավալվող մրցակցությունը գնալով ավելի կսրվի: Կարճաժամկետ հատվածում հասունացող ՏՏ ճյուղերը զարգացող երկրներում կհանգեցնեն ՏՏ ոլորտի աշխատողների աշխատավարձերի աճի, ինչն էլ հավելյալ ճնշում կգործադրի արտապատվիրման շուկաներում մրցակցող հիմնական երկրների վրա: Երկարաժամկետ հատվածում մրցունակ լինելու համար ՏՏ կրթության որակը դառնում է այն հիմնական գործոնը, որը հնարավորություն է տալիս մուտք գործել շուկայի նոր՝ եկամտաբեր և գնային ճնշման նկատմամբ պակաս զգայուն հատվածներ:

Հայաստանի ՏՏ ոլորտը վերջին տասը տարիների ընթացքում սրընթաց աճ է գրանցել՝ դառնալով համաշխարհային մակարդակով մրցունակ և դինամիկ աճող ոլորտներից մեկը Հայաստանում: Սակայն մինչև այժմ Հայաստանի ՏՏ ճյուղի աճի հիմնական գործոնը ծախքերով պայմանավորված արտապատվիրումն է: Ներկայումս այս ճյուղը գտնվում է հասունության փուլում և զգալի մրցակցային ճնշումների ազդեցության տակ, քանի որ աշխատավարձերը մոտենում են մի շարք՝ էժան արտապատվիրման կենտրոններ հանդիսացող երկրների մակարդակին: Այս ամենը կարող է հանգեցնել երկարաժամկետ հատվածում Հայաստանի դիրքերի զիջմանը, եթե չփոփոխվի մրցակցային մոդելը:

Հաշվի առնելով համաշխարհային միտումները և Հայաստանի ՏՏ ոլորտի մարտահրավերները՝ զարգացման ուղին մեծապես կախված կլինի ոլորտի հիմնական մասնակիցների կողմից կատարված ռազմավարական ընտրություններից: Ընտրության հիմքում պետք է ընկած լինեն ոլորտի աճի վրա ազդող գործոնների ազդեցության բազմակողմ գնահատականը և տարբեր սցենարների ծավալման հնարավորությունները:

## *Հայաստանի ՏՏ ոլորտի զարգացման սցենարներ*

Հայաստանի ՏՏ ոլորտի զարգացման սցենարների կառուցման համար մշակվել է հասույթի ձևավորման էկոնոմետրիկ մոդել: Մոդելի կառուցման հիմք են ծառայել Հայաստանում գործող ընկերությունների տվյալները: Ինտերնետային ծառայությունների և ծրագրային ապահովման ու ծառայությունների ենթաճյուղերը դիտարկվել են առանձին, քանի որ այս երկու ենթաճյուղերի շարժիչ ուժերը և «արտադրական գործոնները» տարբեր են:

Մոդելի արդյունքները բացահայտեցին այս ոլորտում եկամտի ձևավորման վրա ազդող հետևյալ հիմնական գործոնները.

- աշխատուժ,
- ընկերության չափ,
- սեփականության ձև,
- աշխատողների վերապատրաստում,
- իրացման շուկաներ:

Քանի որ, ըստ մոդելի, գլխավոր արտածին գործոնը աշխատուժն է, գնահատվել է աշխատուժի առաջարկի չափը 2011թ. համար:

Ոլորտի ապագա աճը զսպող գլխավոր գործոն կլինի աշխատուժի սահմանափակ առաջարկը: Չնայած ՏՏ ֆակուլտետների շրջանավարտների թվի նշանակալի աճին, որակյալ աշխատուժի առկայությունը դեռևս ոլորտի հետագա աճը սահմանափակող հիմնական գործոն է, քանի որ ՏՏ կրթության որակը դեռևս չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

ՏՏ ոլորտում բարձրագույն կրթության մեջ պետության ծախսերը շահավետ ներդրում են պետության տեսանկյունից, քանի որ, ըստ մեր հաշվարկների, մեկ ՏՏ մասնագետի հաշվով դրանք հարկերի տեսքով պետական բյուջե են վերադառնում 7 տարվա ընթացքում, որից հետո պետությունը սկսում է ստանալ զուտ շահույթ:

Համադրելով աշխատուժի առաջարկի գնահատումը ոլորտի վրա ազդող այլ գործոնների (օտարերկրյա ներդրումներ, ներդրումներ կրթության բնագավառում և այլն) հնարավոր զարգացումների կանխատեսման հետ՝ ներկայացվել են ենթաճյուղի զարգացման երեք հնարավոր սցենարներ, որոնք պայմանականորեն անվանվել են ***«Առկա մոդելի ծուղակ», «Մաննրում շուկայի որոշակի հատվածում (նիշայում)» և «Ռազմավարական դիրքավորում»:***

Միջինժամկետ հեռանկարում ինտերնետային ծառայությունների ենթաճյուղի աճի վրա ազդող հիմնական շարժիչ ուժերը կլինեն.

1. Հեռահաղորդակցության շուկայի լրիվ ազատականացումը:
2. Շուկայի ընդլայնումը:
3. Ոլորտի վերաձևավորումը ներդրումների, կլանումների և դաշինքների ստեղծման միջոցով:
4. Նոր տեխնոլոգիաների համատարած կիրառումը և շուկայի սահմանների վերաձևավորումը:

Հիմք ընդունելով վերոհիշյալ գործոնների զարգացումները և որպես շուկայի ապագա ծավալների կանխատեսման ուղենիշ ընդունելով ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների ինտերնետի օգտագործման ցուցանիշները՝ գնահատվել են ոլորտի հիմնական ցուցանիշները 2011թ., երեք սցենարների դեպքում՝ ***«Թվային անտեսում», «Խոչընդոտների վերացում» և «Առաջնորդում դեպի էլ-հասարակություն»:***

Զարգացման սցենարների համադրման արդյունքում գնահատվել են Հայաստանի ՏՏ ոլորտի հիմնական տնտեսական ցուցանիշները 2011թ. համար:

| Ցուցանիշներ | Ներկա իրավիճակ, 2006թ. | Սցենար 1 2011թ. | Սցենար 2 2011թ. | Սցենար 3 2011թ. |
|---|---|---|---|---|
| Ոլորտի համախառն հասույթ, ԱՄՆ դոլար | 71 մլն | 115 մլն | 171 մլն | 248 մլն |
| *Տարեկան միջինացված աճ, 2006-2011թթ.* | | *10%* | *19%* | *28%* |
| Ընկերությունների քանակ | 150 | 172 | 205 | 224 |
| *Տարեկան միջինացված աճ, 2006-11թթ.* | | *3%* | *6%* | *8%* |
| Աշխատողների քանակ | 4 156 | 7 201 | 8 037 | 9 506 |
| *Տարեկան միջինացված աճ, 2006-11թթ.* | | *12%* | *14%* | *18%* |
| Հարկեր, ԱՄՆ դոլար | 12 մլն | 26 մլն | 33 մլն | 42 մլն |
| *Տարեկան միջինացված աճ, 2006-11թթ.* | | *17%* | *23%* | *29%* |
| Արտադրողականություն, ԱՄՆ դոլար | 17 140 | 15 900 | 21 300 | 26 100 |

### *ՏՏ ոլորտի զարգացման ընդհանրական գործոնների ազդեցության գնահատում*

ՏՏ ոլորտի աճի վրա ազդում են նաև մի շարք այլ գործոններ (համաճյուղային գործոններ), մասնավորապես, երկրում հավաստագրված ՏՏ մասնագետների առկայությունը, կարգավորման դաշտը, վենչուրային կապիտալի մատչելիությունը, ենթակառուցվածքների և մաթեմատիկայի ու այլ բնագիտական առարկաների ուսուցման որակը: Միջերկրային համադրությունների միջոցով գնահատվել է այս գործոնների ազդեցությունը ՏՏ ծառայությունների արտահանման ծավալների վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ գործոնների ազդեցությունը տարբեր է՝ կախված երկրների թվային հնարավորությունների օգտագործման չափից:

ՏՀՏ զարգացման ներկայիս մակարդակում Հայաստանի ՏՏ արտահանման և, ընդհանրապես, ՏՏ ճյուղի աճի համար ընդհանրական գործոններից կարևորվում են հավաստագրված մասնագետների առաջարկը և ընդհանուր կարգավորման դաշտը: Սակայն ՏՀՏ զարգացման հաջորդ փուլ անցնելու համար այն պետք է սկսի զարգացնել այն գործոնները, որոնք պայմանավորում են առավել զարգացած ու հասուն տնտեսությամբ երկրների հաջողությունը: Հիմնական գործոններից է վենչուրային կապիտալի հիմնադրամների ստեղծումը կամ ներգրավումը, որոնք կֆինանսավորեն նորարարական նախագծերը Հայաստանում:

### *Հաջողված զարգացման մոդելներ և Հայաստանի ընտրությունը*

ՏՏ ոլորտի զարգացման այլ երկրների (որոնք համեմատաբար կարճ ժամանակահատվածում հաջողության էին հասել) փորձի ուսումնասիրության վրա հիմնվելով՝ առանձնացվել են 3 մրցակցային մոդելներ.

1. Տարածաշրջանային ծավալման պլատֆորմ (Իռլանդիա, Եգիպտոս)
2. Բարձր տեխնոլոգիաների հանգուցային կենտրոն (Իսրայել)
3. Տեղեկատվական  հասարակություն (Էստոնիա, Չիլի)

***Տարածաշրջանային ծավալման պլատֆորմ:*** Այս մոդելին հետևող երկրները հաջողությամբ տեղ են գտել համաշխարհային շուկայում՝ որպես համաշխարհային կորպորացիաների համար լայն տարածաշրջանային շուկաներ ներթափանցելու յուրահատուկ պլատֆորմ: Բարենպաստ միջավայր ստեղծելու, բարձրորակ աշխատուժ ապահովելու և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման միջոցով նրանց հաջողվել է դառնալ օտարերկրյա ներդրումների համար գրավիչ տարածք: Սրա իրականացմանը նպաստել է ֆիսկալ և ֆինանսական խթանների կիրառումը, ինչպես նաև մշակութային և լեզվական նմանությունները ներդրումների ծագման երկրների հետ:

***Բարձր տեխնոլոգիաների հանգուցային կենտրոն:*** Մոդելը ենթադրում է նոր տեխնոլոգիաների և գիտության վրա հիմնված քլաստերների ու ենթակառուցվածքների ստեղծում: Մոդելը մեծապես հիմնվում է յուրահատուկ հմտությունների զարգացման և բարձրակարգ աշխատուժի բազա ստեղծելու վրա, որն ի վիճակի է մշակել նորարարական արտադրանք կամ ծառայություններ: Համաշխարհային մակարդակի գիտական և տեխնոլոգիական դպրոցների ստեղծումը, մաթեմատիկական և գիտական կրթության որակի բարելավումը հանրակրթական դպրոցներում և լայնածավալ ներդրումները հետազոտությունների ու մշակումների մեջ (պետական և մասնավոր) մոդելի հաջողությունը կանխորոշող ամենակենսական գործոններն են: Այս մոդելում առավել նշանակալի են բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության համար տրամադրվող ֆիսկալ և ֆինանսական խթանների դերը, բիզնես և տեխնոլոգիական ինկուբատորների ստեղծումը, որոնք կխթանեն համաշխարհային վենչուրային ներդրողներին՝ նորարարական սկսնակ բիզնեսները ֆինանսավորելու համար:

***Տեղեկատվական հասարակություն:*** Այս մոդելն ունի հստակ դիրքավորում՝ որպես ՏՀՏ-ի հետ համատեղելի միջոցների և ծրագրային ապահովում ստեղծող ու մշակող կենտրոն: ՏՏ ոլորտը սկզբնական շրջանում զարգանում է ներքին ենթակառուցվածքի և տեղական պահանջարկի աճի արդյունքում: Հատկապես կարևորվում են կառավարության կողմից էլ-հասարակության ձևավորմանն ուղղված նախաձեռնությունները (էլ-կառավարության նախագծերը, լայնածավալ ներդրումները հեռահաղորդակցության ենթակառուցվածքներում, ՏՀՏ կիրառման խթանում՝ դպրոցների փոխկապակցման, ինտերնետ կենտրոնների, համակարգչային գրագիտության դասընթացներ և այլն): Օրենսդրական բարեփոխումներն անհրաժեշտ են էլեկտրոնային բիզնեսի գործընթացների ներդրման և հանրային ծառայությունների առցանց (օնլայն) օգտագործման համար (հարկային հաշվետվությունների տրամադրում ինտերնետով, ինտերնետային պետական գնումների համակարգ և այլն): Տեղական պահանջարկի աճը խթանում է ՏՏ ոլորտը և նորարարական ծառայությունների ու ապրանքների ստեղծումը, որոնք հետագայում դուրս են բերվում արտաքին շուկաներ:

***Մանուկ Հերգնյան***

# ՀԱՅՈՑ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## *ՉԻՆԱՍՏԱՆ*

Չինաստանը մեր պատմիչների երկերում կոչվել է *Ճենաց երկիր* (այստեղից էլ՝ *ճենապակի* բառը):

Հայ-չինական առևտրատնտեսական շփումներն սկիզբ են առել Արտաշատի հիմնադրմամբ (Ք.ծ.ա. 170թ.): Աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ հայոց մայրաքաղաքն արագորեն դարձավ տարանցիկ միջազգային առևտրի կենտրոն, ինչի արդյունքում հայ վաճառականներն սկսեցին Չինաստանից ներկրել հում մետաքս (խոզակից հանված կամ խոզակի վրա գտնվող անմշակ հումք) ու մետաքսյա կտորեղեն, իսկ փոխարենն արտահանել պղինձ, կապար, արճիճ, ոսկեթել գործվածքներ, Ալեքսանդրիայի ու Միջագետքի ապակե իրեր և անոթներ:

Ք.ծ.ա. 140-86թթ. չինացի վաճառականները հում մետաքսով, լայքայով ու ջեյթով (չինական կաթնագույն թանկագին քարեր) բեռնավորված քարավանները բերում էին միջինասիական Թարիմ գետի հունի մոտ և փոխանակում հայ վաճառականների ոսկու և արծաթի հետ:

IV դարում, ըստ Խորենացու, *Մամգուն* անունով մի նախարար Չինաստանից փախչում և աղխով գալիս-հաստատվում է Հայաստանում՝ հիմք դնելով *Մամիկոնյան* նշանավոր գերդաստանին:

Վաղ ֆեոդալիզմի շրջանում հայերը Չինաստանում արդեն ունեին կայուն ներկայություն և զբաղվում էին խաղողի մշակությամբ ու գինեգործությամբ. դրա վկայությունն են VII-Xդդ. պահպանված արծվաքիթ, սև բեղ-մորուքով, գինով լի մեկական տիկ գրկած ու ծալապատիկ նստած հայ գինեվաճառների երեք հախճապակե արձանիկները:

1313թ. Թայվանի Ցյուանջոու ծովածոցի համանուն քաղաքում մի մեծահարուստ հայ տիկին կառուցել է մեծ ու գեղեցիկ եկեղեցի և նվիրել կաթոլիկներին:

XVIIդ., ժամանակակցի վկայությամբ, մետաքսի արտադրությունը, թնդանոթ ձուլելու գաղտնիքը, նավագնացության մեջ կողմնացույց օգտագործելը և այլ նորույթներ չինացիներից սովորելով՝ Եվրոպայում տարածել են Օդորիկոս Պորդենոնցին, Մարկո Պոլոն և Վենետիկյան հասարակապետության նավապետ *Անտոն Հայը*:

Նոր Ջուղայի (Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանից ոչ հեռու) հիմնադրումից հետո (1605թ.) Հնդկաստանի վրայով հայ երթևեկ վաճառականների «թիրախ» դարձավ նաև Չինաստանը: 1686-1691թթ. Տիբեթի Լհասայից Չինաստանի Սինինգ քաղաք էին անցնում նորջուղայեցիներ Ծատուրը, Մելիջանը, Նիկողոսն ու Դավութը, իսկ Պողոսի որդի Մելիջանը տևական բնակություն էր հաստատել այդ քաղաքում: Նրանց առևտրական հետաքրքրության առարկաներն էին ձուլածո ոսկին, մուշկը (չինական մշկայծյամի արտաթորանքից ստացվող, Եվրոպայում օծանելիքի արտադրության մեջ գործածվող և անչափ թանկ գին ունեցող բուրումնավետ նյութ), թեյը, գործվածքները և այլ ապրանքներ:

XVIIIդ. կեսին բրուսացի խոջա Շուքուրը վենետիկաբնակ մեծահարուստ վաճառական Հովհ. Սեղբոսյանի առևտրական գործակալն էր Պեկինում: Նույն դարի վերջերին Չինաստանում բնակվող գանձակեցի Մնացական Գասպարյանը խոշոր գումար կտակեց Սբ. Էջմիածնին, իսկ Մականյում ապրող Հովհ. Մաթևոսյանը 80 հազ. ռուփի կտակեց Նոր Նախիջևանի համայնքին:

XIXդ. սկզբին հայ-չինական հարաբերություններում տեղի է ունենում պատմամշակութային վիթխարի նշանակություն ունեցող իրադարձություն: Մականյում, վաճառականի ընտանիքում ծնված *Հովհաննես Ղազարյանը* (նույնինքը՝ Ջոն Լասսար), որ փայլուն տիրապետում էր չինարենին և Կալկաթայում աշխատում էր որպես թարգմանիչ, 1802թ. ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի թարգմանությանը: 1805թ. 26-ամյա երիտասարդն ավարտում է Գիրք

Ծննդոցի և Մատթեոսի Ավետարանի թարգմանությունները և մի քանի գլուխ տպագրում: Անժամանակ մահը խանգարում է գործն ավարտի հասցնել, բայց փաստ է, որ Աստվածաշնչի *առաջին* չինարեն թարգմանիչը եղել է հայ:

XIXդ. երկրորդ կեսին մեծ թվով հայ վաճառականներ էին ապրում Մուկդենում, Շանհայում, Խարբինում, Չանչունում, Տյանցզինում: Վերջինիս գորգի խոշոր գործարանը, ուր աշխատում էր 2000 մարդ, հիմնել և ղեկավարում էին հայերը:

Հայոց համար առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում Հոնկոնգը, ուր 1870-ական թթ. կային մեծահարուստ կալվածատերեր (Հ. Խաչիկյան, Ա. Աբգարյան, Ս. Հարությունյան և այլք):

XXդ. առաջին քառորդը նշանավորվեց նոր զարգացումներով: Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխությունը, քաղաքացիական պատերազմը պատճառ դարձան, որ Հեռավոր Արևելքում գտնվող շատ հայեր (զինվորականներ, բժիշկներ, փաստաբաններ, ձեռնարկատերեր և այլք) անցնեն Մանջուրիա և բնակություն հաստատեն մի շարք քաղաքներում: 1920-ական թթ. Շանհայի քաղաքային մարզադաշտը պատկանում էր *Հայկ Ասատրյանին:* 1923թ. վիրահայ *Կարապետ Ասլեույանի* շնորհիվ Խարբինում կառուցվեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 1930-ական թթ. նույն քաղաքում գործում էին Հայոց բարեգործական միություն, «Արծիվ» անվամբ մարզակումբ, թատերասիրաց միություն:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Մանջուրիայի հայերը (շուրջ 1200 հոգի) հալածանքների ենթարկվեցին ինչպես ճապոնացիների, այնպես էլ չինացիների կողմից: 1950-1960թթ. Չինաստանում կային 2-3 տասնյակ հայեր, որոնք ստիպված արտագաղթեցին Ավստրալիա, ԱՄՆ, Կանադա և այլ երկրներ:

Բոլոր ժամանակների ամենանշանավոր չինաբնակ հայը եղել է նորջուղայեցի *Պողոս Խաչատուրի Աստվածատրյանը* (նույնինքը՝ սըր Պոլ Չաթեր, 1846-1926թթ): 1864-ից բնակություն է հաստատել Հոնկոնգում, եղել է նավատեր, բանկատեր, կառուցել է տեղի նավահանգիստը, համալսարանը, բազմաթիվ բնակելի շենքեր: Հղացել է *«Praya Rocla mation»* ծրագիրը, որի շնորհիվ լայնացվել է ծովափը: Կղզու անգլիական գաղութային վարչության և օրենսդիր ժողովի անդամ էր, ցմահ հաշտարար դատավոր: Կալկաթայի Սբ. Նազարեթ եկեղեցին փրկել է նյութական ծանրագույն վիճակից՝ 1924թ. նվիրաբերելով 3 մլն ռուփի: Պատկառելի գումարներ է հատկացրել բազմաթիվ հաստատությունների՝ առանց ազգի ու կրոնի խտրության: Ի պատիվ նրա՝ Հոնկոնգի երկու փողոց կրել են «Աստվածատրյան» և «Խաչիկ» անունները:

***Խաչատուր Դադայան***
***«Նորավանք» հիմնադրամ***